Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՓԱՐ

31(354)
15.10.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԼՈՒՅՍԻ ՍԵՐՄՆԱՑԱՆՆԵՐԻ ՏՈՆԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսուցիչներ

Արցախի Հանրապետության իշխանությունների և անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ, իսկապես համաժողովրդական մի տոն, որն ավանդաբար նշվում է մեր երկրում՝ որպես խորին հարգանքի դրսևորում մանկավարժի մասնագիտության նկատմամբ:

Բոլորս առանձնահատուկ ջերմությամբ ու ակնածանքով ենք հիշում մեր ուսուցիչներին, նրանց դասերն ու խրատները, որոնք ուղեկցում են մեզ մեր ողջ կյանքի ընթացքում: Դա մի դժվարին ու միաժամանակ հետաքրքիր աշխատանք է, պատասխանատու ու չափազանց կարևոր մեր երկրի ու ժողովրդի համար: Հենց դպրոցական տարիքում է ձևավորվում մարդու անհատականությունը, նախանշվում նրա հետագա կյանքի ուղին, և այդ գործում անգնահատելի է ուսուցչի դերակատարությունը: Դուք ձեր իմաստնությամբ ու բարությամբ, համբերատարությամբ ու անձնուրացությամբ կրթում ու դաստիարակում եք մատաղ սերնդին՝ նրան փոխանցելով ձեր գիտելիքներն ու հմտությունները, ձեր մեծ հոգու մի մասնիկը, ինչի համար մենք երախտապարտ ենք ձեզ ու շնորհակալ, թանկագի՛ն ուսուցիչներ:

Վստահ եղեք, ձեր խնդիրները միշտ գտնվում են ԼՂՀ իշխանությունների ուշադրության կենտրոնում, քանի որ կրթությունն ու գիտությունը հանդիսանում են մեր պետության կենսագործունեության գերակա ուղղություններից մեկը:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ Արցախի բոլոր ուսուցիչներին և մաղթում խաղաղություն, քաջառողջություն ու մեծագույն հաջողություններ՝ ձեր ազգանպաստ առաքելության իրականացման ճանապարհին:

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԼԱՎԱ ԱՍՐՅԱՆԻ

Սիրելի՛ ուսուցիչներ

Հայ ժողովուրդը միշտ էլ խորին պատկառանք է ունեցել ուսուցչի հանդեպ՝ նրան համարելով ազգի մշտագոյությունն ապահովող կարևոր խավ, ում նվիրյալ աշխատանքի շնորհիվ կրթվում և դաստիարակվում են վաղվա գիտնականն ու զինվորը:

Ոչ միայն հայրենասեր քաղաքացին, այլ նաև աշխարհում մրցունակ ու բարձրորակ մասնագետը սկսում են ձևավորվել հենց դպրոցում. այս ամենի քաջ գիտակցումով են մեր ուսուցիչներն ամեն օր դասամատյանը ձեռքներին մտնում դասարան: Եվ դա յուրօրինակ սխրանք է, որ ձեր կողմից կատարվում է ամեն օր՝ երկրի և առհասարակ յուրաքանչյուր աշակերտի ապագայի հանդեպ ունեցած մեծագույն պատասխանատվությամբ:

Բարձր գնահատելով մանկավարժի առաքելությունը՝ ԼՂՀ իշխանություններն անում են հնարավորը՝ ուսուցչի համար ապահովելու աշխատանքային նորմալ պայմաններ և բարելավելու նրա սոցիալական վիճակը: Դրա առհավատչյան կրթական բնագավառում իրականացվող բարեփոխումներն են և դպրոցաշեն այն բազում ծրագրերը, որոնք հաջողությամբ կենսագործվում են Արցախի Հանրապետությունում:

Սիրելի՛ ուսուցիչներ, մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ իմ ջերմ շնորհավորանքները հղելով, մաղթում եմ մշտապես արժանի լինել մանկավարժի վեհ կոչմանը, և թող միայն հաջողություններն ուղեկցեն ձեզ՝ թե՛ աշխատանքի մեջ և թե՛ անձնական կյանքում:

ԱՐԺԱՆԱՑԵԼ ԵՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ

Ուսուցչի օրվա կապակցությամբ Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում ձեռք բերած ակնառու հաջողությունների համար ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում է շնորհվել.

Սաշա Ավանեսյանին - ԼՂՀ Մարտունու շրջանի Մուշկապատի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ,

Ժորա Մարգարյանին - ԼՂՀ Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի տնօրեն,

Անահիտ Պողոսյանին - Ստեփանակերտի N 7 հիմնական դպրոցի տնօրեն:

ՀԱՐԳԱՆՔԻ ՈՒ ՄԵԾԱՐԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 5-ը՝ Ուսուցչի մասնագիտական օրը, հանդիսավորությամբ նշվեց Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում: Ներկա էր հանրապետության ղեկավարությունը՝ ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանի գլխավորությամբ:

Երեկոն հարգանքի ու մեծարանքի տուրք էր լույսի ու բարու սերմնացաններին՝ Մեծն Մաշտոցից սկզբնավորված նորօրյա ուսուցիչներին, նրանց, ում ամենօրյա աշխատանքով կրթվում ու դաստիարակվում է մատաղ սերունդը:

Մասնագիտական օրվա կապակցությամբ ուսուցիչներին շնորհավորեց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, ով արժևորեց ուսուցչի աշխատանքը՝ որպես ամենապահանջվածն ու ամենակարևորը, որպես ազգային արժեհամակարգ ձևավորողի, ում հոգածու ուշադրության ներքո հասունանում, կրթվում, գիտելիքներ են ձեռք բերում երկրի ապագա քաղաքացիները:

Նա միաժամանակ երախտագիտություն հայտնեց ԼՂՀ Նախագահին՝ օրվա առթիվ հանրապետության ուսուցչությանը հղած ուղերձի, կրթության և գիտության ոլորտի նկատմամբ ցուցաբերած ուշադրության, համակարգի խնդիրների հաջորդական իրականացման և արդեն ավանդույթ դարձած տոնի կապակցությամբ ուսուցիչներին պատվավոր կոչումներ շնորհելու համար՝ հավաստիացնելով ԼՂՀ իշխանություններին, պետության ամրապնդման գործընթացն ապահովող մեր ժողովրդին, որ կաշխատեն ամենայն նվիրումով՝ մատաղ սերնդին լիարժեք կրթություն տալու համար:

Երեկոյին հրապարակվեցին նախարարության կողմից անցկացված ամենամյա մրցույթների արդյունքները:

«Տարվա լավագույն դպրոց» մրցույթի արդյունքներով *«Ուսումնական գործընթացի բարձր որակ ապահովելու համար»* և *«Ուսումնական գործընթացում ձեռք բերած հաջողությունների և ուսուցման կաբինետային համակարգին անցնելու համար»* անվանակարգերում հաղթող են ճանաչվել Ստեփանակերտի հ. 1 հիմնական և Ասկերանի շրջանի Խնապատի միջնակարգ դպրոցները:

«Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ» մրցույթում հաղթող է ճանաչվել Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի Զահրա Հարությունյանը: Նույն մրցույթի երեք՝ *«Աշակերտների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրություն զարգացնելու կարողություն»*, *«Առարկայի իմացության մակարդակը և նյութը մատուցելու վարպետություն»*, *«Լավագույն ավանդույթների պահպանումը և նորարարությունը մանկավարժության մեջ»* անվանակարգերում հաղթող են ճանաչվել՝ համապատասխանաբար, Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռիմա Մելքումյանը, Ասկերանի շրջանի Ավետարանոցի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նվարդ Բաղդասարյանը, Մարտակերտի հ. 1 հոսքային միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նատաշա Պողոսյանը:

«Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթում հաղթող է ճանաչվել Ստեփանակերտի հ. 3 պետական մանկապարտեզի դաստիարակ Նվարդ Բաղդասարյանը, նույն մրցույթի *«Սիրտս նվիրում եմ երեխաներին»* անվանակարգում՝ ՀՕՄ-ի Մեծ Թաղերի «Սոսե» մանկապարտեզի դաստիարակ Գոհար Ալթունյանը:

«Տարվա լավագույն զինղեկ» մրցույթում հաղթող է ճանաչվել Ասկերանի շրջանի Այգեստանի միջնակարգ դպրոցի զինղեկ Վաչագան Գրիգորյանը, *«Ուսումնանյութական բազայի հարստացման և նորարարության համար»* և *«Աշակերտների մոտ առարկայի նկատմամբ սեր և հետաքրքրություն զարգացնելու համար»* անվանակարգերում՝ Մարտակերտի շրջանի Նոր Այգեստանի միջնակարգ դպրոցի զինղեկ Գոռ Ավանեսյանը և Հադրութի շրջանի Տողի միջնակարգ դպրոցի զինղեկ Մարտիրոս Գրիգորյանը:

Հաղթողներն արժանացել են ԼՂՀ ԿԳՆ պատվոգրի և դրամական մրցանակի:

Երեկոյին գեղարվեստական բարձր մակարդակ ապահովեցին Ստեփանակերտի ՄՊՍԿ սաները, մշակույթի քաղաքային տան կատարողները, Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի սովորողներ՝ միջազգային և հանրապետական մրցույթների ոսկե մեդալակիրներ, երգիչ Պողոս Աբելյանը և դուդուկահար Արթուր Մկրտումյանը:

Երեկոյին անակնկալ մատուցեց Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի ուսուցիչների երգչախումբը՝ Կ. Օրբելյանի «Հայ ազգ փառապանծ» երգի գեղեցիկ կատարմամբ:

Սեփ. լրատվություն

ԱՌԱՔՅԱԼՆԵՐ

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԸ

Գալյա Բադասյան - 90

Սույն «Հիշողության լույսը» հոդվածը գրվել է երեք տասնամյակից էլ առաջ: Տպագրվել է «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» հանդեսում: Իմ մայրենիի ուսուցչուհի Գալյա Բադասյանի մարդկային, մանկավարժական կերպարն է ներկայացնում: 20-րդ դարի Արցախի հայուր լավագույն մանկավարժներից մեկին, ում կարելի է դասել ամենաեզակիների շարքը: Այսօր նա 90-ամյա տարիքում է, միտքը՝ պայծառ, պրպտող, ընթերցում է, բորբոք պահում իր կյանքի ու գործունեության կրակը:

«Լուսարարի» էջերում ավելի լավը չեմ կարող ասել նրա մասին, քան հիշյալ հոդվածն է՝ գրված 60-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Պատահաբար միայն ես ձեռքս առա մոտ երեք տասնամյակ առաջ դպրոցն ավարտելու առթիվ մեր դասարանցիների խմբանկարն ու տարվելով հուշերով ու երկար «զրուցելով» դասղեկ ընկեր Բադասյանի հետ, հենց այդ պատահական պահից էլ մնացի շնորհակալ, քանի որ առանց դրա գուցե և չհիշեի՝ «Նա արդեն 60 տարեկան է...»: Ժամանակի խառը վազքի մեջ քիչ էլ անտարբեր մեր միտքը, այո, աններելիորեն վրիպում է բաներ, որոնք, ինչպես գարնան մաքուր ավիշ, հոսել են մեր էության կանաչ երակներով՝ մղելով մեզ այնտեղ, ուր դպրոցական նստարանից տեսչացել ենք նրանց՝ ուսուցիչների մտքի ու սրտի ու լույսի թևով: Բայց ինչո՞ւ ենք վրիպում, ինչո՞ւ չեմ ես հաճախ ձեռքս առնում մեր դասարանցիների խմբանկարը: Մի՞թե մեր ուսուցիչը մեզ դաս էր տալիս որպես իր պարտականության կատարում, մենք էլ՝ աշակերտներս, նրան ունկնդրում միայն գիտելիք ու շնորհք առնելով՝ եթե ոչ այն ժամանակ, գոնե հիմա չզգալով այն ավիշը: Չէ՞ որ մենք քիչ թե շատ «տեղ ենք հասել», իսկ նա՝ «հանկարծ» 60 տարեկան է դարձել... Այն վառվռուն, մայրենի լեզվի ու խոսքի սիրով լեցուն աղջիկը, որի զրնգուն ձայնին ունկնդիր՝ իմաստավորվել սկսեց մեր մանկությունը: Եվ հիշելով ետպատերազմյան հացպակաս դառը-երջանիկ օրերը, ցուրտ դասարանի դասերը, ուզում ես քեզ ճիշտ հասկանալ, քո մեջ էլ՝ նրան...

Հայ ուսուցչի այն սերնդին, որին դասվում է Գալյա Բադասյանը, ճակատագիրը երես չի տվել: Նա առաջին անգամ դասարան է մտել արդեն ծանր հարված կրած. պատերազմում զոհվել էր միևնույն եղբայրը, որը եթե վերադառնար, այնքա՜ն ուրիշ կերպ կդասավորվեր նորավարտ ուսուցչուհու կյանքը: Իր ուսերին չէր մնա օջախի հոգսը: Բայց նա արժանապատվորեն մտավ այդ հոգսի տակ: Այո, զոհելով կնոջ իր ապագան, պահելով-խնամելով ծեր ծնողներին, նաև վառելով նոր կրակ, որը հոգեորդի Ղարիբի շեն ընտանիքը պիտի լիներ տարիներ անց՝ մայրական իր ջերմ օրհնությամբ: Դարձյալ հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Ղարիբի: Հոգսի հետ սերնդին, սակայն, տրված էր նաև այն հաղթահարելու ուժը՝ Սեր առ գործ իր, Հավատ առ գալիք օր և Նվիրումն: Մի անգամ եմ միայն այդ կնոջը տեսել «հոգով փշրված»՝ բացման ժամանակ զոհվածների հուշարձանի ոտքն ընկած, լուռ, անսփոփ հեկեկալիս և՛ հարազատ եղբոր, և՛ մյուս հարյուրավորների հիշատակի առջև: Մնացյալ դեպքում հառնում է կերպարը ոգեպինդ հայ ուսուցչի, որի սրտի զարկը հեռու դարերում է խփում այն օրից, երբ ինքը Մաշտո՛ցը կանգնեց իր ժողովրդի առաջ՝ ուսուցանելու տառերն իր արարած:

Հայոց լեզուն մեր խոսքն է, գրականությունը՝ ոգեղեն սուրբ հացը, որ պիտի նշխար առ նշխար անդադրում բաշխել հայ երեխայի մտքին, այնպես, որ նա մեծանա ժողովրդի պատմությամբ, հայրենի հիշատակներով զորացած: Լեզուն կենարար ջուր է, բանաստեղծի ասած՝ հայոց սարերից ու դարերից հոսող-եկող գետ, կարողանալ է պետք այն կաթիլ-կաթիլ ուղղել հողը, որ նոր ու առողջ ծիլերով ա՜րտ դառնա Մաշտոցի ու Խորենացու, Աբովյանի ու Թումանյանի, բոլորիս հայրենը. նման գիտակցությունը Գալյա Բադասյանի արժանիքն է եղել, և բայը խելացիորեն տրոհվել է եղանակների ու ժամանակների, դեմքի, թվի, դարձել իմաստ, ներծծվել մեր էության մեջ, և Խաչատուր Աբովյանը դժվար ու տառապագին ճիգով պատգամել է մեզ սովորել մայրենին, սիրել մեր վերքն ու երգը: Այդ ո՞ր ուժն է ուժավորել ընկեր Բադասյանին՝ 30-40 տարի կանգնելու նույն գրատախտակի ու սեղանի առջև, կավիճը ձեռքին, գիրքը սեղանին, թեմա-թեմա հազար անգամ մանրելու, տարրալուծելու սրտերին մեր խոսքն ու գրականությունը: Բադասյանի և նրա նման վաստակավորների օրինակով խորհում ես. գուցե ուսուցչի ծառայությունը հայրենիքին, մարդ կրթելուդաստիարակելու այդ ողջ աշխատանքը մանրակրկիտ հաշվելով ու տեսանելի դարձնելո՛վ միայն ակնառու դառնա և ոչ առաջին պահ թվարկվող արժանիքներով՝ թե այսինչ-այսինչյանները նրա աշակերտներն են եղել, նա այսինչ պարգևների կրող է և այլն: Ինչպես ջրամբարի տարեկան եկամտաբերությունն է ի ցույց դնում ջրաշինարարի վաստակը: Բայց հաշվել կլինի՞ կյանք գործուղված բոլորի՞ նպաստը ժողովրդական գործին:

Ահա նա աչքիս առաջ «Թումանյան» թեման անցնելիս: Ջահել ու զրնգուն, առօրյա ամեն ինչից վերացած, ուղղակի անհիրական: Նույնիսկ դառնացածությունը մեկ-երկուսի վատ պատասխանից տեղի է տվել, և ընկեր Բադասյանը կառուցում է մեզ համար Թումանյանի տաճարը: Ելնում է մեր հողի մեծ ոգին իր բանաստեղծությունից ու «Գիքորից»: Մանկագրությունից ու պոեմներից, իր գործունեությունից ու ժամանակակիցների հուշերից ելնում՝ ինչպես արևը: «Արևի պես նայեցեք աշխարհին»: Մենք էլ ենք դառնում անհիրական, Թումանյանի կանաչ, վիթխարի ընկուզենին բերում-դնում Իշխանագետի մեր ծորում, այդտեղից գետն ի վեր ելնում «դեպի» այն կիրճը, ուր փրփուր է տալիս Դեբեդը, և Անուշը խելագար ողբում է իր սիրո կորուստը: Մոռացել ենք, որ դասերից հետո անտառ՝ փայտի պիտի վազենք կամ ջրաղաց, կարտոֆիլը քաղհանելու կամ... որ սոված ենք ու մոռացել ենք դասին թաքուն տկողին ուտել: Ինքը կուշտ է, ինչե՞ր չի կերել տանը (դե նա ուսուցիչ է), թե չէ էդ ո՞նց է ձայնը գնալով ավելի հնչուն դառնում ու ոգեշունչ: Բայց՝ չէ, ի՜նչ ենք ասում. ձմռանը չէ՞ր, գնացել էինք իրենց տուն՝ փայտ կտրելու, նա իր փոքրաթիվ, բայց հարազատ գրքերից մեզ ընթերցելու տալուց առաջ հյուրասիրեց խաշած կարտոֆիլով ու ավելուկով: Եվ մենք ուտելիս զարմացած էինք, թաքուն խղճում էինք ընկեր Բադասյանին: Վերջը զանգը տալուն պես վրա ենք թռչում ոչ թե հանդ ու ջրաղաց շտապելու, այլ խնդիրքով, որ դասարանով բեմադրենք «Գիքորը»:

Այդ օրերից ահա, երեք տասնամյակ անց, խմբանկարի առաջ մտածում էի. «Ինչպես հեռու գյուղում մնացած մորդ հանդեպ ես լցվում այրող խղճահարությամբ, որ նա դժվար ժամանակի մեջ սնեց ու մեծացրեց քեզ, ամեն ինչից զրկված, աչքը աշխարհում շատ բանի կարոտ, այնպես էլ ուսուցչիդ «ցավն է քեզ պատում», որ այսօր երկուսդ էլ կոչումով հայ լեզվի, գրականության մարդ, քեզ «ավելին» տրվեց՝ մայրաքաղաքային գրական կյանքի ու աշխատանքի առօրյան, իսկ ինքն էլի այնտեղ է՝ լեռների այն գյուղում, այն նույն դպրոցի թվում է, միապաղաղ ուսուցչությունում: Սակայն իմ այս նեղմիտ բաժանումը, գիտեմ, նա չի կիսի, քանի որ կիսողը տասը, քսան, երեսուն տարի հետո կգտներ ելք դեպի այդ ասպարեզ, ինչպես բազում չկոչվածներն են մեկ, երկու, երեք տարի անց այդ անում...

Ինքը՝ իր գործի երախտավորը, ինչպես հայ դպրոցի ամեն իսկական աշխատավոր, 60-ամյա կյանքի հետևում ունի այսօր մոտ քառասնամյա համապարփակ նվիրում ժողովրդական գործին, և սրանում էլ թաքնված է ուսուցիչ մնալու կարծր ու չաղարտվող ոսկին: Ինչպե՛ս կերտվեց այդ վաստակը. հենց ճակատագրին երես չտալու գնով, չէ՞, թանկ աշխատած հացի արժանապատվությամբ, չէ՞:

Իմ դպրոցական ժամանակից շատ բան է փոխվել: Նոր դպրոց է կառուցվել գյուղում, աշխատելու պայմաններն, անշուշտ, լավացել են, ընկեր Բադասյանն էլ՝ բարձրացնելով մատաղ սերնդին, ինքն էլ է բարձրացել՝ տարիներ շարունակ ուսմասվար և դիրեկտոր է եղել, ապա և արժանացել վաստակավոր ուսուցչի կոչման, բայց թող նա ինձ ների, ես ի՛մ օրերից պիտի զրուցեմ իր հետ, ի՛մ ընկեր Բադասյանի հետ: Այսօր ես երախտագիտության չասված մի խոսք ունեմ հայտնելու իրեն:

Սունդուկյան էինք անցնում, սունդուկյանական մեր ներշնչումն էլ բերեց «Պեպոյի» բեմադրության: Խստապահանջ ու անզիջում ընկեր Բադասյանը պայման դրեց՝ ամեն մեկս անգիր պիտի սովորի իր դերաբաժին խոսքը, որ խաղայինք առանց հուշարարի, այն ժամանակ՝ չէ, հիմա եմ զարմանում, թե, ուրեմն, Գալյա Բադասյանի եռանդն է վարակել ինձ, սերը հայ գրականության, որ այնպես տքնաջան անգիր յուրացրի Պեպոյի դժվարալեզու ողջ խոսքը պիեսում: Այն գրի էի առել աշակերտական տետրում և անվերջ մտմտում էի տանը և դասամիջոցին, հանդից գալիս ու վերմակի տակ քնելիս: Բացում, առաջս էի դնում գրականության դասագիրքը և երանությամբ երկա՜ր նայում մեծ դերասան Գևորգ Չմշկյանին՝ Պեպոյի դերում: Վե՛րջ, իմ Պեպոն էլ պատրաստ է՝ բեմ դուրս գալու, գյուղի ողջ հասարակության աչքի առաջ գդակը ճակատին ծռած, ձեռքը բարձրացրած՝ շպրտելու Զիմզիմովի երեսին. «Բա էս քու կոտրած ձեռովը չի՞ս գրի»: Բայց... էս իմ կարկատած վարտիքո՞վ, ամոթ չի՞... Մեկ էլ մայրս ինձ է բերում լայն փողքերով բամբակե մի վարտիք, իսկը՝ թիֆլիսական-կինտոյական, որ սիրով կհագնեի առանց Պեպոյի էլ: Իսկ որտեղի՞ց մորս փող: Որտեղի՜ց... «Պեպան ջան, էդ վո՞ւրդիան»,- զարմացած են նաև ընկերներս: Բա գիտե՞մ, որ ասեմ: Մայրս էլ կարծես գաղտնիք է պահում, ինչու՝ պարզ չէ: Միայն վերջերս, Վ. Ռասպուտինի «Ֆրանսերենի դասերը» ընթերցելուց հետո, ուր ուսուցչուհին իր լույս ու կրակից բացի սուղ նյութականից էլ էր բաժին հանում ընչազուրկ իր աշակերտին, ես գլուխս ափերիս մեջ առա՝ ա՜... վարտի՜քը... ընկեր Բադասյանն էլ ինձ է օգնության հասել իմ տխրամած երջանկության ժամին: Նրանք նույն սերնդի ուսուցչուհիներ են, ահա թե ինչ, Լիդիա Միխայլովնան և Գալյա Բադասյանը:

Այդպես է եղել կյանքը...

Մի առանձին խանդաղատանք է միշտ տածվել մանավանդ գյուղական ուսուցչի գործունեության հանդեպ. նա որովհետև ամեն ինչ է եղել հայրենի գյուղում՝ ուսուցիչ ու հասարակական գործիչ, մշակութային կյանքի կազմակերպիչ ու աշխատանքի մարդկանց ընկերը: Գալյա Բադասյանը արյամբ ու կյանքով է հարազատ հողի դուստրը: Լեռնային Ղարաբաղ, Հադրութի շրջան, մեծ Թաղլար: Այնտեղ քանի՜ հազար գիշեր գրավոր է ստուգել նա ու որքա՜ն ջանք նվիրել դպրոցական կյանքի կազմակերպմանը, քանի՜ միջոցառում է նախաձեռնել դպրոցում ու գյուղական ակումբում և ինչքա՜ն ժամանակ ու եռանդ բերել ծննդավայրի սոցիալական կարիքներին - ո՞վ կարող է լրիվ հիշել թեկուզ ընկեր ուսուցիչներից. կենսագրություն է դա, սակայն եղելություններով ու շողացող թվերով չփայլատակող կենսագրություն, որի իմաստն անշոշափելիորեն ներծծվել է իր աշակերտների հույսերին, որոնք անտես թելի պես ձգվում էին դեպի գեղեցիկ մի ափ: Ափսո՜ս, ինձնից հետո ես մի անգամ գոնե ականատեսը չեմ եղել իր դասի. ինչպիսին է նա: Ինչպես հեռու այն ժամանա՞կ: Եթե քիչ հոգնած, ոչ առաջվա եռանդով, ուրեմն, ես չեմ խոր պատկերացնում ուսուցչի գործի ասպետականությունը: Ախր անարդարացի մի բան կա կարծես թե, որի համար մեղավոր չէ ոչ ոք այս աշխարհում: Այդպես է ուղղակի սահմանված ուսուցչի ճակատագիրը: Ամեն մարդ հասարակական կապերից բացի, նաև ի՛նքն է, չէ՞, իր անձնական աշխարհը, սրտի իր անկյունն ունի: Քանդակագործն, օրինակ, հոգևոր ուժերի նվաղման պահին կարող է կանգ առնել քաղաքի այսինչ վայրը զարդարող իր ստեղծագործության առջև և հպարտությունից լիցքավորվել, գրողը՝ իր գիրքը վերապրելով, կոմպոզիտորը, նկարիչը... Ուսուցիչն, ահա, «զրկվում է» իր ստեղծագործությունից, ի վերջո, նրա եռանդը սնողն էլի մնում է ժողովրդական մեծ գործի առաքյալի իր գիտակցումը, արածի դիմաց համաժողովրդական սիրով վարձատրվածությունը:

Սրտի քո թաքուն անկյունը, ընկեր Բադասյան, թաքուն չի մնում, տեսանելի է ամեն կողմից: Քո ստեղծագործությունը՝ կյանք գործուղված զավակներդ իրենց հեռուներից, ինչպես ես այսօր, զրուցում են քեզ հետ, պարզապես վառ պահել է պետք մարդկային հիշողությունը՝ չկտրելու սերունդների՝ միմյանց փոխանցվող ամենավեհ այն ի՞նչը, որ մարդկանց մա՛րդ է պահում և միավորում որպես ԺՈՂՈՎՈՒՐԴ մի ձույլ:

Արփաշես ՂԱՀՐԻՅԱՆ

ՍԻՐՎԱԾ ՈՒ ՆՎԻՐՅԱԼ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Յուրաքանչյուր մահկանացու լույս աշխարհ գալու օրից ապրում է, ստեղծում, արարում: Եվ բախտավոր է նա, ով իր արածի արդյունքը կարողանում է պարզորոշ տեսնել:

Ես ուզում եմ կրկին մեծ սիրով խոսք ասել այն մանկավարժի մասին, ով իր ապրած տարիները նվիրել ու շարունակում է նվիրել մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վեհ ու պատվավոր գործին: Խոսքս Մարտակերտի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի դասվար, իմ շատ սիրելի, ինչպես նաև իմ առաջին ուսուցչուհի Անյա Առաքելյանի մասին է:

Տիկին Առաքելյանն ինձ համար անփոխարինելի մի էակ է: Չէ՞ որ նա է ինձ սովորեցրել մեսրոպյան տառերը, առաջնորդել դեպի կյանք ու գեղեցիկի աշխարհ: Ի՜նչ հուզմունքով ու քնքշանքով է նա ձեռքն առնում «Այբբենարանը» ու հայ մանուկներին առաջնորդում դեպի գիտության բարձունքները: Ես համոզված եմ, որ տիկին Առաքելյանի յուրաքանչյուր սան հպարտ է, որ աշակերտել է նրան, որովհետև նա, բացի իր գործին նվիրյալ լինելուց, մարդկային բարձր հատկանիշներով օժտված անձնավորություն է: Տիկին Առաքելյանն իր սաներից յուրաքանչյուրի մասին անմոռաց հուշեր ունի ու մտովի միշտ նրանց հետ է և նրանց մասին միշտ գովասանքով ու մեծ հպարտությամբ է խոսում:

Ես բախտավոր ու հպարտ եմ, որ եղել եմ Ձեր սանը, որ Ձեզ նման ընտրել եմ ուսուցչի մասնագիտությունը: Մի մասնագիտություն, որ լցնում ու իմաստավորում է իմ կյանքը:

Ես շնորհակալ եմ ու խոնարհվում եմ Ձեր վաստակի առաջ, ընկերն Առաքելյան, որ Դուք մեսրոպյան տառերից բացի, սովորեցրել եք մերթ խստությամբ, մերթ գգվանքով ու մերթ տխրությամբ քաղհանել բոլորի միջից որոմը, կյանքի համար վատ ու անհարկավոր ամեն ինչ՝ փոխարենը սերմանելով լավագույն արժանիքներ:

Հիրավի, Դուք գերազանց յուրացրել ու մեզ էլ սովորեցրել եք մարդ լինելու արվեստը: Եվ տարիների թռիչքն անգամ ի զորու չէ մոռացնել Ձեր անունն իմ կյանքում:

Օգտվելով առիթից՝ սիրելի ուսուցչուհի, ի սրտե շնորհավորում եմ Ձեր տոնը՝ ցանկանալով անպարփակ երջանկություն: Եթե հնարավորություն լիներ, մի հրովարտակ կարձակեի, որ Ձեր ճանապարհին միշտ ծաղկունք վառվի, և Ձեզ համար միշտ գարունները գան ու չգնան:

Ժաննա ՄԱՄՈՒՆՑ
Մարտակերտի շրջանի Կոճողոտի միջն. դպրոցի օտար լեզվի ուսուցչուհի

ԱՐԱՐՈՒՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն քանի հավերժություն է՝ մարդկությունը տիեզերական կատարելության ճանապարհին է: Հեշտ չի եղել ուղին՝ լեցուն բազում խոչընդոտներով: Ժամանակների կորագծերը հատվել են սերունդների հերթափոխների խաչմերուկում: Ժառանգորդ սերունդը նախորդից ստացել է նրա արարումների հանրագումարը և լուսավորել իր անցնելիք ճանապարհը: Սերունդների ճամփորդությունը ժամանակային տարածություններում, ըստ իս, անցել է դպրանոցներով: Իսկ հմուտ նավավարների և սերունդների միջև կապի ապահովման դերում մշտապես հանդես են եկել Մեծ ուսուցչապետներն ու մանկավարժները: Ֆիզիկայի և բնության երևույթներից ամենաշատն իմ մեջ տպավորվել է էներգիայի մի տեսակից այլ տեսակի փոխակերպվելու հատկությունը: Սա թերևս մարդկային գոյության ամենադիպուկ իմաստավորումն է ժամանակի հոլովույթում: Հենց այդ էներգիան է մարդուն մղել արարումների ինքնազոհության՝ հանուն համամարդկային առաջընթացի: Իսկ ինչպե՞ս պատկերացնել այդ առաջընթացն առանց եղածը պահպանելու և փոխանցելու: Եվ ահա մարդկային պրպտուն միտքը երկնում է դպրոցը: Արդի դպրոցաշինության յուրահատկություններն, անշուշտ, պայմանավորված են ժամանակի ու առաջընթացի պահանջներով, սակայն այդ ամենը կփոշիացվեր դեռևս սաղմնային վիճակում, եթե անտեսվեր սերունդների հիշողության գլխավոր պահապանի՝ ուսուցչի դերն ու նշանակությունը մեր իրականության մեջ: Ցավոք, նման միտումներ հասարակության մեջ այսօր առկա են: Սակայն դա ամենևին չի նշանակում, թե պակասել է մեր մանկավարժների անձնվիրությունն ու իրենց մասնագիտության նկատմամբ պաշտամունքը: Ասվածի լավագույն առհավատչյան են անկախության ամրապնդման և պետականակերտման գործում մեր ձեռքբերումներն ու աներեր ճանապարհը, որի մեջ անժխտելի է մեր ուսուցիչների շոշափելի ներդրումը:

Մարտունու շրջանի Վազգենաշենի միջնակարգ դպրոցի դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն Կարինե Վարդանյանը ծննդով համանուն շրջանի Նորշեն գյուղից է: Բաքվի մանկավարժականն ավարտելուց հետո ամուսնու՝ Լևոն Վերդյանի հետ աշխատանքի ուղեգրվեց Շահումյանի շրջան:

Կարինե Վարդանյանը ծնվել է 1953թ. օգոստոսի 14-ին: Իր 33-ամյա մանկավարժական գործունեությունը սկսել է Շահումյանի շրջանի Մանաշիդ գյուղից՝ զուգահեռ զբաղվելով ակտիվ հասարակական գործունեությամբ՝ որպես կոմկուսի բյուրոյի անդամ: Մանկավարժական գործունեության հենց արշալույսին երիտասարդ ամուսիններն աչքի ընկան աշխատասիրությամբ և խոստումնալից որակներով՝ արժանանալով տնօրենության և կոլեկտիվի խրախուսանքին: Արցախյան շարժման տարիներին, ինչպես մեր շատ մտավորականներ ու մանկավարժներ, Կարինե Վարդանյանն ու նրա ամուսինն անդամագրվեցին անկախության պայքարի առաջամարտիկների բանակին և իրենց ուրույն ներդրումն ունեցան Շահումյանում շարժումն իր հունով տանելու գործում: Սակայն հայտնի դեպքերն ու ճակատագրի չար հեգնանքը տարագրության մատնեցին շրջանի բնակչությանը, այդ թվում և նրանց: Այսպես, որոշակի ընդմիջումից հետո Կ. Վարդանյանի ընտանիքը հայրենի հողի կանչով վերահաստատվեց Վազգենաշենում՝ կրկին նվիրվելով սերունդ կրթելու և դաստիարակելու սուրբ գործին: Իսկ վերաբնակեցվող գյուղի նոր կազմավորվող դպրոցի խնդիրներն ու դժվարությունները շատ էին և բազմաբնույթ. դպրոցական համապատասխան մասնաշենքի և ուսումնական գույքի բացակայություն, մանկավարժների պակաս: Սակայն տիկին Կարինեն հավաստիացնում է, որ մանկավարժի այսօրվա կոչումն իր մանկության երազանքի իրական շարունակությունն է, իսկ դժվարություններն այնքան չնչին էին դրա դիմաց, որ աննկատ են մնացել: «Եթե ես ևս մեկ անգամ ընտրության առաջ կանգնեի մասնագիտության հարցում, ապա առանց ակնթարթ անգամ երկմտելու մանկավարժ կդառնայի: Քանզի կան մարդիկ, ովքեր մանկավարժ ծնվում են և իրենց գոյի միակ իմաստավորումն այդ մասնագիտության մեջ են գտնում»,- ասում է Կարինե Վարդանյանը: Ադամորդուն իր գոյավորման նախակունքներից սկսած, մշտապես հուզել է ժամանակի հոլովույթում հիշվելու հանգամանքը՝ լինի արքա, ռազմիկ, մտավորական, թե շինական: Գլխավոր ձեռքբերումն ու երջանկությունը կյանքում Կ. Վարդանյանը համարում է սերունդների հիշողության մեջ մնալը, աշակերտների կողմից գնահատված լինելը, ինչն իրեն մշտապես պրպտումների ու ստեղծագործելու է մղել: 60-ամյա մանկավարժն Աստծո ամեն օրն ապրում, երջանկանում և տխրում է յուրաքանչյուր աշակերտի ձեռքբերումներով ու անհաջողություններով: Իսկ կյանքն իմաստավորվում է նրանով, երբ աշակերտներին հաղորդակից դարձնելով մեր խորախորհուրդ ու ոսկեղենիկ մայրենիին, նրանց մեջ տեսնում է իր տված գիտելիքների արտացոլանքը: «Գիտելիքն է ինչպես մեր, այնպես էլ մարդկության նախաակունքներից մինչև աստվածային բարձունքներ տանող ճանապարհը»,- շեշտում է Կարինե Վարդանյանը: Որպես հայոց լեզվի և գրականության երկարամյա մասնագետ՝ նա կտրականապես դեմ է նոր կրթահամակարգի արգասիք համարվող սեղմավեպերին, որոնք աղավաղում են մեր գրականության գլուխգործոցները՝ իրենց ռազմահայրենասիրական ու գեղարվեստական դաստիարակության նպատակներով հանդերձ: Չնայած անժխտելի են նաև դպրոցական բարեփոխումների դրական արժանիքները: Այս ամենին Կ. Վարդանյանը ծանոթանում է բազմազան տեղեկագրերից, որոնք ընթերցում է հանգստի պահերին: Անշուշտ, հետևողական ինքնակրթությունը մասնագիտական կատարելագործման և կայացման կարևոր բաղադրիչներից է: Իր հող ու ջրի, մանկության հուշերի հետ տիկին Կարինեի կապվածությունը կենսաձևի է վերածվել: Քանի որ նրա ծննդավայր Նորշենն այնքան էլ հեռու չէ, առիթը բաց չի թողնում այցելելու մանկության վայրերն ու տուրք տալու անցյալի քաղցր հիշողություններին: Իսկ կյանքի վեց տասնամյակի կենսափորձով իմաստնացած ուսուցչուհին այսուհետ կյանքի նպատակ է դարձրել ուժերը ներածին չափ հայրենիքի բարօրությանն ու շենացմանը նպաստելը:

Ու այսպես սկսվում է սկիզբը Մեծ ճանապարհի: Ճանապարհ, որով անցնում են սերունդները՝ իրենց ժառանգածը կատարելագործելու, հղկելու և գիտության ադամանդափայլ շողերը տիեզերական անհունները հասցնելու շռնդալից շքերթով:

Վանիկ ՆՈՎԻԿՈՎ

ՈՒՍՈՒՑՉԻՍ

Ուսուցիչս եթե դու ես,
Թևեր առած կսլանամ,
Տիեզերքը կնվաճեմ,
Ուղենիշս եթե դու ես:

Կմեծանամ, կզորանամ,
Հեռուներում կսավառնեմ,
Ձեր՝ ինձ հանձնած բանալիով
Բոլոր դռները կբացեմ:

Ուսուցիչս եթե դու ես,
Ոտքս քարի չի էլ դիպչի,
Ոչ մի ահից չեմ երկնչի,
Ուսուցիչս եթե դու ես:

Ու թե կյանքում մեծ մարդ դառնամ,
Անհաս բարձունք թե նվաճեմ,
Թե կյանք դառնա երազը իմ,
Պաշտամունքս դու կլինես:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ ԴԵՊԻ ԲԱՐՁՈՒՆՔ,

Աշնանային օր է՝ առատ լույսով, դարավոր անտառից եկող շնկշկան հովերով առլեցուն: Երկնքի լազուրում հաղթական ճախր է առել հպարտ արծիվը:

Շուրջս ուրախ շենքեր են: Ուսուցիչներ, դպրոցականներ և ծնողներ, որոնք բռնել են վեցամյա իրենց փոքրիկների ձեռքերը ու... հուզված են ոչ պակաս, քան զավակները:

Քարվաճառի դպրոցի բակում ծփացող եռագույններն ասես ուղղություն են տալիս թե՛ ուսուցիչներին և թե՛ երեխաներին: Մեծ է օրվա խորհուրդը. հազարամյա հայ հողի վրա կրկին հնչեց դպրոցական առաջին զանգը՝ ազդարարելով նոր ուսումնական տարվա սկիզբը: Այս հողում ապրողները, հիրավի, հինավուրց մեր երկիրը հայկական շնչով շենացնողներ են, ովքեր գիտակցում են, որ հայի գոյատևման հիմնական պայմանը դարերի խորքից եկող ու դարեր գնացող գիրն ու դպրությունն է:

Ազգ իմ, երիցս դժբախտություն ճաշակած, բայց երբեք չվհատված, ահա կանգնել ես հոգս ու ցավի, փորձությունների դեմ հանդիման՝ նմանվելով այն մենավոր ծառին, որ չխոնարհվեց շառաչող հողմ ու փոթորկի առաջ, այլ հավատաց ու սպասեց, որ ծիլերը բարձրանան, ու կյանքը զարթնի վերստին:

Մեսրոպատառ հրաշք «Այբբենարան» ստացած՝ քայլում են առաջին դասարանցիները տունդարձի ճանապարհով: Թոթով լեզվով տանը դասվարի խոսքերը պիտի կրկնեն՝ «Այբբենարանի» օգնությամբ պետք է հարթենք գիտության բարձունքներ տանող ճանապարհը»:

Անանա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջն. դպրոցի դասավար

ԽՈՍՔ Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ

Գրի ու դպրության, լույսի ու գիտության ծարավ ու դրանով անմեռ մնալու գաղտնիքն իմաստնորեն յուրացրած մեր ժողովրդի համար ուսուցիչը եղել ու մնացել է այն մարդը, որի մեծության ու գործի առջև միշտ խոնարհվել են, որի անունը տվել են սիրով՝ հոգու խորքում սրբորեն պահելով պատկերը նրա՝ որպես հույսի պատգամ, որպես լավի ու գեղեցիկի վառ կանթեղ, արթուն խղճի ձայն:

Իսկական ուսուցիչը նվիրյալ ասպետ է, որի համար ապրելու իմաստը մարդկանց բարություն անելու ձգտումն է: Չարը մերժելու, բարին պաշտպանելու համար ուսուցիչը զոհաբերում է շատ բան: Աշխարհի բոլոր ծագերում հայրենասիրության կրակը մի խորին խորհրդով առաջին անգամ աշակերտների հոգում բորբոքում է հայրենապաշտ ուսուցիչը: Նա բոլոր ծնողների համար դառնում է վստահված անձ: Եվ ծնողները հավատում են ուսուցչին, ամեն առիթով խոր ակնածանքով դիմում նրա օգնությանը: Աշխարհաշեն մարդիկ կերտում են նվիրյալ ուսուցչի անձեռակերտ հուշարձանը՝ որդոց որդի փոխանցելով նրա թողած պատվիրանները: Համեստ է ուսուցչի պաշտոնը, բայց գործը պատկանում է հավերժությանը:

Ցավով պետք է նշեմ, որ ամեն ուսուցիչ չէ, որ արժանի է այդ մեծ կոչմանը:

Որքան էլ սիրուն ճառեր ասի ուսուցիչը հայրենիքի մասին, ինչպիսի սիրուն մեջբերումներ էլ անի հայ բանաստեղծներից, եթե նա չի հետաքրքրվում, թե ինչու է երրորդ շարքի վերջին նստարանին կծկված պատանին տխուր, միևնույն է, չես հավատա այդ ուսուցչին:

Որքա՜ն հաճախ ոմանք կոտրում են բալենու ծաղկած ճերմակ ճյուղը, և որքա՜ն հաճախ անտարբեր անցնում ենք չար տղայի կողքով, որ ջարդում է ծառի, ճյուղը՝ ջարդելով ինչ-որ բան իր հոգում...

Եթե հիշենք ճապոնացի բանաստեղծի տողերը («Ինձ քարկոծե՛ք: Քիչ առաջ ես նոր ծաղկած բալենու ճյուղը կոտրեցի»), անտարբեր չենք անցնի նրա կողքով: Այսօր նա ջարդում է անմեղ ծառը, իսկ վա՞ղը...

Այսօրվա մեջ տեսնենք վաղը, քանզի այդ վաղը մերն է նույնքան՝ որքան աճող սերնդինն է ստուգապես: Բայց որքա՜ն հաճախ մոռանում ենք վաղը՝ այսօրվա մեջ և այսօրը՝ վաղվա մեջ:

Ու ծնունդ են առնում «հոյակապ» մի ջարդարար, «հոյակապ» մի երկերեսանի, մի նյութապաշտ, մի սադիստ, մի բանդիտ ու բազմաթիվ այլ արատավորներ...

Բժշկի անտարբերությունը բարեկամն է մահվան, դատավորինը կարող է կործանել մարդու ճակատագիրը, գործարանի տնօրենինը հարված է պետությանը, այն երկրին, որի անունից հաճախ մեծ-մեծ խոսում է, անտարբեր գիտնականը քար է՝ ընկած գիտության ճանապարհին և այլն, և այլն:

Բրունո Յասենկու «Անտարբերների դավադրությունը» վեպի ցնցող բնաբանը հիշենք. «...Վախեցի՛ր անտարբեր մարդկանցից, նրանք ո՛չ սպանում են, ո՛չ դավաճանում, բայց նրանց լռության համաձայնությամբ է, որ աշխարհում գոյություն ունեն դավաճանությունն ու սպանությունը»:

Ահավոր ժանգ, ահավոր չարիք է անտարբերությունը: Ահա դա՛ պետք է վերացվի, դա՛ պետք է հանել մարդու միջից:

Եվ այն ժամանակ ես կասեմ՝ այդ մարդու համար էլ հայրենիքն սկսվում է այդտեղից...

Լավ է գոնե, որ մեր շրջապատում բազմաթիվ անտարբերների կողքին կան նաև հայրենասեր, իրենց գործին նվիրված անհատներ, ովքեր կարող են ձեռք մեկնել, պաշտպանել, օգնել, կառուցել... Հենց նման մի անձնավորություն է Ասկերանի շրջանի Իվանյան համայնքի բնակիչ Սամվել Բեգլարյանը, որին էլ մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում ամբողջ աշակերտական և մանկավարժական կոլեկտիվների անունից՝ օգնության ձեռք մեկնելու համար: Տա՛ Աստված, որ մեր շրջապատում նման մարդիկ շատանան:

Վերջում ուզում եմ շնորհավորել հանրապետության բոլոր ուսուցիչներին՝ Ուսուցչի տոնի կապակցությամբ, ցանկանալ ամենալավն ու բարին: Թող որ մեր շրջապատում անտարբեր ուսուցիչներ չլինեն, լինեն միայն գործի նվիրյալներ, քանզի մեր ձեռքերում է ապագա սերունդների ճակատագիրը:

Արեւիկ ԹՈՎՄԱՍՅԱՆ
Ասկերանի շրջանի Իվանյանի միջնակարգ դպրոցի ՄԿԱԳՏՏ

ՎԱՍՏԱԿ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՐԴՎՅԱԼ ՁԻՆՎՈՐԸ

Մեծ գործեր կատարելու համար պետք չէ լինել մեծագույն հանճար, պետք չէ լինել մարդկանցից ավելի բարձր, պետք է լինել նրանց հետ:

Մոնտեսքյո

«Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոց» գրքի գլխացանկերից մեկն էլ կրում է «Աթայան Լաուրա» անունը, որը ներառում է այն ազնվագույն անձնային հատկանիշները, ըստ որոնց՝ մեկուսացած լեռնագագաթ լինել չի կարող, այլ կարող է լինել միայն լեռնաշղթայի կատարներից մեկը:

Նա ծնվել է ապրելու և արարելու մանուկների աշխարհում: Նրա տարերքը, էներգիայի աղբյուրը, եռանդի հուրը, աշխատելու անսպառ ցանկությունն ու միաժամանակ ամեն մի հոգսից ձերբազատվելու միջոցը երեխաներն են: Լ. Աթայանի համար երեխաների ժպիտը, գոհունակությունը, սեր ու երախտագիտության զգացում արտահայտող հայացքներն ամեն ինչից վեր են ու առաջնային: Նա անցել է դժվարին, միաժամանակ հաճելի մանկավարժական ուղի: Հաճելի, որովհետև մանկավարժությունը նրա աներևակայելի աշխարհն է, դժվարին, քանի որ շատ փորձությունների միջով է անցել: Դժվարությունները մարդու մեջ ծնում են դրանք հաղթահարելու ունակություն, որով օժտված է Լ. Աթայանը:

Ծնվել է 1950թ. օգոստոսի 15-ին: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը և այն ավարտել 1966-ին՝ նույն տարում էլ ստանալով մանկավարժական գործունեության մկրտությունը Կարմիր Շուկայի միջնակարգում: 1974-1976թթ. նույն դպրոցում աշխատել է որպես երկարօրյա խմբի դաստիարակ: 1976-1977 ուստարում Լ.Աթայանն աշխատանքի է անցել Դաշքեսանի Ղոթուլի 8-ամյա դպրոցում՝ որպես դասվար: 1978-1979 ուստարուց աշխատել է Սարուշենի միջնակարգ դպրոցում՝ որպես կրտսեր դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի, 1982-1985թթ.՝ Սարուշենի մանկապարտեզում, 1985-ին՝ Ասկերանի մսուր-մանկապարտեզում, 1992-ին՝ Սզնեքի միջնակարգ դպրոցում, իսկ 1993-ից մինչև 2013թ. ուսումնական տարվա ավարտը՝ Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում: Աշխատելով որպես դասվար՝ ձեռք է բերել իր մանկավարժական գործունեության հիմնական հաջողությունները՝ արժանանալով ոչ միայն սաների, այլև մանկավարժական և ծնողական կոլեկտիվների սիրուն ու հարգանքին:

Գոյություն ունի՞ ավելի վսեմաշուք տեսարան, քան երկնակամարը. այդ տեսարանը Լ. Աթայանի համար երեխայի հոգու խորքերն են: Նրա յուրաքանչյուր դաս կարելի է համարել բաց դաս: Յուրաքանչյուր երեխայի հաջողությունից զնգում են նրա հոգու զանգերը, երգում հոգու լարերը:

Երբեմն հարցնում եմ ինքս ինձ՝ երկրագնդի վրա քանի՞ այդպիսի մարդ-անհատականություն է մնացել, որ ապրում է ուրիշի հաջողություններով, որպիսին Լաուրա Աթայանն է: Ճիշտ է ասված, երջանիկ է նա, ով կարողանում է հավատարիմ մնալ իրեն: Ընկեր Աթայանն իր անցած մանկավարժական ուղու սկզբից մինչև վերջ հավատարիմ է մնացել իր սկզբունքներին ու գաղափարներին. հենց սրանում է նրա մեծությունը: Նա արժանացել է բազմաթիվ պատվոգրերի և խրախուսանքների, բայց ահա 2000թ. նրա՝ «Տարվա լավագույն դասվար» կոչմանն արժանանալը մեծագույն հաճույք պատճառեց դպրոցի մանկավարժական և ծնողական կոլեկտիվներին, որից Լ. Աթայանը շատ շոյված զգաց: Երկար տարիներ ղեկավարելով դպրոցի դասվարների մեթոդմիավորումը՝ նա առաջինն արժանացավ այդ կոչմանը, որի իրավացիության մեջ համոզված էին թե՛ դպրոցի տնօրենությունը, թե՛ մանկավարժական խորհուրդը: Լաուրա Աթայանն իր գործունեության ընթացքում առաջնորդվել է «Ով աշխատում է, նա տիտղոսների կարիք չի զգում. նրա աշխատանքն իր համար ինքնին բավարար պատիվ է» նշանաբանով:

Արժանապատվորեն կատարելով իր պարտքը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում՝ որպես դպրության երդվյալ զինվոր, նա փառավոր հաղթանակով այս տարվանից ավարտում է իր մեծ գործը՝ թողնելով ծիածանի գույներով ողողված մի սքանչելի հետագիծ: Նրա թողարկած յուրաքանչյուր սան գլուխ է խոնարհում նրա առաջ: Մի՞թե դա պատիվ և հպարտություն չէ: Աթայան Լաուրան սովորական մարդ չէ, որ ասենք՝ «Բարի ճանապարհ, դու ավարտեցիր քո գործը»: Նա փոթորկահույզ, անսպառ էներգիայով օժտված անձնավորություն է՝ իր սաներին նվիրված և իր ողջ էությամբ պատրաստ ամեն մի նորը նրանց հաղորդելու, ընկերների շրջանում, ինչու չէ, նաև ողջ հանրապետությունում հարգանք վայելող անձնվեր մանկավարժ է: Ուստի իրավունք եմ վերապահում դպրոցի ողջ մանկավարժական կոլեկտիվի անունից ասել.

- Դու հրաշալի մանկավարժ ես, ընկե՛ր Աթայան: Մենք քեզ շատ ենք սիրում: Դու թողեցիր կոլեկտիվ ստեղծող, սերունդների մեջ հայրենասիրություն սերմանող «Մեծ ուսուցիչ» բարի անունը: Բարին ընդ Քեզ:

Աիդա ԳՅԱՆՋՈՒՄՅԱՆ
Ասկերանի Է. Բարսեղյանի անվան միջն. դպրոցի փոխտնօրեն

ԹՎՈՒՄ Է, ԹԵ ԱՐԱԾԸ ՇԱՏ ՔԻՉ Է, ԹԵ ԻՆՔԸ ՈՉԻՆՉ ՉԻ ՀԱՍՑՐԵԼ

Էլմիրա Թորոսյանը 42 տարի աշխատել է կրթության համակարգում՝ արժանվույնս անցնելով իր ճանապարհը դպրոցի պիոներական ավագ ջոկատավարից մինչև հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, այնուհետև՝ փոխտնօրեն: Դրանք տքնաջան աշխատանքի ոչ դյուրին, բայց արգասաբեր տարիներ էին:

Նա իր կյանքի վառ տարիները, հոգու ջերմությունը, իր ողջ ուժն ու կորովն անշահախնդիր նվիրել է դպրոցին ու աշակերտներին:

Եռանդուն, անսահման մեծ հոգու տեր ուսուցչուհուն, ով նաև ուսուցման ու դաստիարակության գաղտնիքների մեծ գիտակ է, շատերն են սիրում և ճանաչում որպես լավ մարդու և լավ մասնագետի:

Տեսնելով նրա երիտասարդական ավյունը՝ դժվարանում ենք հավատալ, որ նա անցել է վաստակած հանգստի: Քառասուներկու տարվա ընթացքում նա բազմաթիվ սաների է ճանապարհ դրել դեպի մեծ կյանք՝ հասցնելով իրենց նպատակին և սիրվելով նրանց կողմից...

Էլմիրա Թորոսյանին, իրավամբ, կարելի է համարել լավի ու բարի գործերի անխոնջ սերմնացան:

Տիկին Թորոսյանին թվում է, թե ինքը ոչինչ չի հասցրել կամ էլ արածը շատ քիչ է: Բայց երբ հետադարձ հայացք է ձգում հետևում մնացած տարիներին, հոգին խաղաղվում է, և զգում է, որ անիմաստ չեն անցել տարիները, որ հպարտանալու շատ բան ունի:

Աշխատանքային գործունեության բոլոր տարիներին նա ակտիվությամբ, եռանդով ու պատասխանատվության բարձր զգացումով իր ուրույն տեղն է գրավել կոլեկտիվում՝ Շոշի Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցում, աշխատել խղճի մտոք և սրտի թելադրանքով:

Մանկավարժական աշխատանքը նրա սիրած գործն է, նրա կյանքի իմաստը:

Էլմիրա Թորոսյանը վստահելի ընկերուհի է, և նրա բնավորության պարզությունը նրա հետ շփվող յուրաքանչյուր մարդու հարգանքն է հարուցում:

Տիկին Թորոսյանը նաև օրինակելի մայր է, սիրելի տատիկ: Նա վայելում է ընտանիքի, սիրելի զավակների և թոռնիկների սերն ու համակրանքը:

Մտածելով, որ ինքը դեռ շատ անելիքներ ուներ, որ արածը քիչ է, որ տարիներն անցան, նա չի ափսոսում, որ անցել է վաստակած հանգստի:

Այսպես են մտածում միայն իսկական մանկավարժները, ովքեր ծերանում, բայց հոգով միշտ մնում են ջահել, միշտ կյանքին ծարավ:

Շնորհակալություն՝ Ձեր աշխատանքի և բարի սրտի համար:

Մաղթում ենք քաջառողջություն, իսկ Ձեր զավակներին ու թոռներին, որոնց նվիրել եք Ձեր կյանքը՝ երջանկություն և բարեկեցություն:

Ասկերանի շրջանի Շոշի Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Դպրոց-ընտանիք

ՈՒՍՈՒՄԸ ԱՇԱԿԵՐՏԻ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԻԱԿ ՈԼՈՐՏԸ ՉԷ

Հասարակության բարօրության չափանիշներն անմիջապես առնչվում են կրթությանը: Ուստի կրթության ամբողջ գործընթացի տիրույթում պետք է դիտարկել հասարակության վաղվա օրը:

Դաստիարակչական գործընթացի օպտիմալ պայմաններից մեկը արտադասարանական և արտադպրոցական աշխատանքի նյութական պայմաններն են: Այդ գործում իրենց ներդրումն ունեն դասվար-դասղեկները, խմբակավարները, դասավանդող ուսուցիչները, աշակերտական և ծնողական խորհուրդների անդամները:

Դաստիարակությունը երբեք հասարակ գործ չի եղել, բոլոր ժամանակներում էլ այդ հարցում եղել են տարբեր մոտեցումներ: Հարկ է ուշադրությունը սևեռել դպրոցի և սովորողների ծնողների համագործակցության վրա: Այսօր մանկավարժահոգեբանական խնդիրներն անհնար է լուծել առանց աշակերտների ծնողների օգնության և ակտիվ աջակցության: Կարևոր է կապ հաստատել ծնողների հետ, նրանց դարձնել դաշնակիցներ դաստիարակության գործում:

Մինչդեռ պարզվում է, շատ դեպքերում ծնողները, տարված կենցաղային և այլ խնդիրներով, հեռանում են դպրոցից և երեխաների դաստիարակության պատասխանատվությունը բարդում ուսուցիչների ուսերին, որոնք իրենց հերթին մեղադրում են ծնողներին՝ ոչ ճիշտ դաստիարակության համար: Արդյունքում աշակերտի մտահորիզոնը շեղվում է, ուժեղանում է փողոցի ազդեցությունը: Աշակերտի ծնողները նրա ուսուցիչներն ու դաստիարակներն են: Ծնողներով է պայմանավորված, թե երեխան ինչպիսին կգա դպրոց, և բարոյական ու հոգևոր ինչ արժեքներ են նրա մեջ: Դպրոցը կամ զարգացնում է այդ հատկանիշները, կամ էլ ստիպված վերադաստիարակում է: Երկու դեպքում էլ մանկավարժը պետք է իմանա ընտանիքի բարոյական վիճակը, ծնողը՝ ուսուցչի բարոյամանկավարժական պահանջները: Իսկ դրա համար նախ ծնողներն իրենք պետք է կրթված ու դաստիարակված լինեն, ունենան երեխա կրթելու և դաստիարակելու համապատասխան գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ: Ծնողների չափից ավելի խստությունը, երեխաներին ստորացնող, նրանց անձը վիրավորող պատիժները, սեփական կարծիքն ու որոշումները նրանց վզին փաթաթելը, հրամայական տոնը խաթարում են վստահության և փոխըմբռնման մթնոլորտն ու հաճախ նրանց մղում անթույլատրելի արարքների: Յուրաքանչյուր ծնողի պետք է տալ մանկավարժահոգեբանական գիտելիքների բավարար պաշար, օգտագործել բոլոր ավանդական (ժողովներ, կոնֆերանսներ, տոներ, արշավներ, հանդիպումներ տարբեր մասնագետների հետ) և ոչ ավանդական (ծնողական ակումբներ, դպրոցներ, համալսարաններ, ծնողական ժողովներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ) և այլ աշխատանքի ձևեր:

Այսօր շատ տարածված է ծնողական դպրոցների (համալսարանների) ստեղծման գաղափարը, որտեղ պարապմունքների թեմատիկան և հաճախումների ժամանակացույցը (յուրաքանչյուր ամիս՝ առնվազն մեկ անգամ) կազմում են տվյալ դասարանի դասղեկը, ուսուցիչները և ծնողները, իսկ դպրոցի տնօրենը վավերացնում է:

Ծնողական դպրոցում ծնողները ձեռք կբերեն մանկավարժական և հոգեբանական գիտելիքներ՝ երեխաների հետ ճիշտ փոխհարաբերություններ, վերահսկողություն, օգնություն, վստահություն և փոխըմբռնում հաստատելու նպատակով:

Այսպիսով, ուսուցչի մասնագիտական կարևոր պարտականություններից մեկը սովորողների ծնողների հետ այնպիսի համագործակցության կազմակերպումն է, որը կընդլայնի նրա մանկավարժական գործունեության դաշտը՝ ստեղծելով ծնողական ազդեցության յուրահատուկ ոլորտ:

Մերօրյա դպրոցը չպետք է լինի միայն սովորողներին գիտելիքներ և կարողություններ տվող կրթական հիմնարկ: Ուսումը շատ կարևոր է, բայց աշակերտի հոգևոր կյանքի միակ ոլորտը չէ: Իսկական դպրոցն աշակերտական կոլեկտիվի բազմակողմանի հոգևոր կյանքն է, կոլեկտիվ, որտեղ ուսուցչին և նրա սաներին միավորում են բազմաթիվ հետաքրքրություններ ու հրապուրանքներ, որոնք էլ կազմում են ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների հիմքը, և որն իր հերթին ամբողջ կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման գրավականն է:

Մարինե ԳՐԻԳՈՐՅԱՆ
Սպեփ. հ. 3 միջն. դպրոցի փոխտնօրեն

ԳՆԱՀԱՏԱՆՔ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Քաշաթաղի շրջանում 2013-14 ուստարում գործում է 51 հանրակրթական դպրոց և 2 մասնաճյուղ (Հակում և Գետափում): Ուսուցիչների թիվը՝ 740, աշակերտներ՝ 1759, որից առաջին դասարանցիներ՝ 200, 12-րդ՝ 93: Ուսուցչի մասնագիտական տոնի առթիվ հոկտեմբերի 5-ին Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանի մոտ կայացավ հանդիպում կրթության ոլորտի աշխատողների հետ: ԼՂՀ վարչապետի հուշամեդալով պարգևատրվեցին բաժնի վարիչի տեղակալ Հովհաննես Սահակյանը և Մովսեսաշենի դպրոցի նախկին տնօրեն, այժմ՝ ուսուցիչ Միքայել Բալայանը: Իսկ կրթության բաժնի առաջատար մասնագետ Արաքսյա Այվազյանը, Ծիծեռնավանքի Վ. Առաքելյանի անվան և Վանի միջնակարգ դպրոցների ուսուցիչներ Ջուլիետա Իսահակյանը և Վարդան Գրիգորյանն արժանացան վարչապետի պատվոգրին: Չորս ուսուցիչներ՝ էդիկ Հակոբյան (Վուրգավանի միջնակարգ դպրոց), Վոլոդյա Ղալեչյան (Հայկազյանի Հ. Խաչատրյանհանվան միջնակարգ դպրոց), Աննա Մկրտչյան (Վաղազինի հիմնական դպրոց) և Աստղիկ Ավետիսյան (Սուսի Սերոբ Հանեյանի անվան միջնակարգ դպրոցի ուսմասվար), արժանացան շրջվարչակազմի պատվոգրին: Շնորհավորելով բոլոր մանկավարժներին և մաղթելով բարին՝ շրջվարչակազմի ղեկավար Ս. Խաչատրյանը կարևորեց ուսուցչի դերը: Այնուհետև շրջվարչակազմի աշխատակիցներն այցելեցին Բերձորի հ. 1 և հ. 2 միջնակարգ, երաժշտական, արվեստի և սպորտի դպրոցներ, մանկապարտեզ: Այցեր եղան նաև Քարեգահի միջնակարգ դպրոց, տեղի «Սոսե» մանկապարտեզ և Սուսի միջնակարգ դպրոց: Աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանի և կրթության բաժնի վարիչի տեղակալ Հովհաննես Սահակյանի հետ եղա Քարեգահի, Բերձորի հ. 2 և Սուսի դպրոցներում: Քարեգահի դպրոցում աշխատում է 24 ուսուցիչ, սովորում 37 աշակերտ՝ 9 դասարան-համակարգով: Առաջին դասարանում կա 3 աշակերտ: Մեր այցի ժամանակ նրանց մոտ կերպարվեստի դաս էր. երեխաներն իրենց երազանքն էին նկարում: 5-12-րդ դասարաններում Ուսուցչի օրը դասը վարում էին աշակերտները: Բոլոր ուսուցիչներն էլ գոհ էին աշակերտ-ուսուցիչների աշխատանքից: Աշակերտները մանկավարժներին նվիրեցին իրենց պատրաստած շնորհավորական բացիկները:

Բերձորի Վահան Զատիկյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցում տարրական դասարանների աշակերտները ելույթով ողջունեցին ուսուցիչներին: Նույն պահին բարձր դասարանցիները դրսից էին շնորհավորում՝ ձեռքներին «Շնորհավոր տոնդ, ուսուցի՛չ» պաստառը: Դպրոցում սովորում է 159 աշակերտ՝ 12 դասարանով: Տարրական դասարաններում կա 78 աշակերտ, որից 1-ինում՝ 17: Աշխատում է 29 ուսուցիչ:

Սուսի Սերոբ Հանեյանի անվան միջնակարգ դպրոցում շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը շնորհավորեց մանկավարժներին՝ նվիրելով ծաղիկներ: Ուսմասվար Աստղիկ Ավետիսյանը պարգևատրվեց շրջվարչակազմի պատվոգրով: Իրենց ուսուցիչներին ելույթով շնորհավորեցին աշակերտները: Կրթօջախում սովորում է 35 աշակերտ. 1-ին դասարանում՝ 5, ավարտական 12-րդում աշակերտ չկա: Աշխատում է 17 ուսուցիչ:

Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի ուսուցիչներին շնորհավորեցին և ծաղիկներ նվիրեցին շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուշ Մխիթարյանը և աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանը: Նույն օրը Քաշաթաղի շրջանի կրթության ասպարեզի ներկայացուցիչները ներկա եղան Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում Ուսուցչի օրվան նվիրված հանդիսությանը:

Ջոհրաբ ԲՈՔՈՅԱՆ

Շնորհավորանք

ԱՆՄՆԱՑՈՐԴ

Լրացավ էլեոնորա Գրիգորյանի ծննդյան 60 տարին, տարիներ՝ լցված ստեղծագործ աշխատանքով, սաների նկատմամբ սիրով ու նվիրումով: Միշտ բարեհամբույր, միշտ հումորով, իմաստուն խորհուրդներով ու համբերատար:

Բազմափորձ ու լավագույն մանկավարժը նաև հրաշալի անձնավորություն է, գեղեցիկ մայր ու մեծ գերդաստանի տանտիկին, մարդ, որ իր ներկայությամբ կարողանում է բարության ու լավատեսության մթնոլորտ ստեղծել, իր հետաքրքիր խառնվածքով գրավել գործընկերներին, ունկնդիրներին:

Սկսնակ ուսուցիչները հաճախ են դիմում նրան՝ մեթոդական ու մասնագիտական օգնության ակնկալումով: Մայրական անուշ ժպիտով տիկին էլեոնորան ընդառաջում է նրանց, դասալսումներ կատարում, սատարում ու ոգևորում, մեթոդական նորարարություն պահանջում նրանցից, բացատրում մանկավարժի բարդ ու դժվարին աշխատանքի յուրահատկությունները:

Էլեոնորա Գրիգորյանը մանկավարժական բեղմնավոր աշխատանքին զուգահեռ երկար տարիներ դպրոցի արտադասարանական աշխատանքների գծով տնօրենի տեղակալն է և սրբությամբ ու պատասխանատվությամբ է կատարում իր գործը: Նա բազմաթիվ հետաքրքիր ու գեղեցիկ միջոցառումների հեղինակ է, գրական-գեղարվեստական ընթերցումների, բովանդակալից ասուլիսների ու տարբեր թեմաներով բանավեճերի կազմակերպիչ:

Նրա մեծագույն հավատամքը ազնվությունն ու հավատարմությունն է՝ հայրենիքին, ընտանիքին, աշխատանքին ու ընկերներին:

Շնորհավոր տոնդ, ուսուցի՛չ, թո՛ղ օրերդ բացվեն կապույտ անմոռուկների նման, կյանքդ զարդարվի խինդով ու ժպիտների բույլով, թո՛ղ գալիքը միայն ուրախություն ու երջանկություն պարգևի քեզ:

Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Շնորհավորանք

ՊԱՐՏՔԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԶԳԱՑՈՒՄՈՎ

Նա, ով ցանկանում է երեխային լավ դաստիարակել, դատապարտված է մշտապես հետևելու արդարամիտ հայացքների:

Բալզակ

Նման մոտեցումը Սուսաննա Դադայանի համար սկզբունք է: Նա կառուցում է երեխայի հոգին, ձևավորում նրա էությունը, իր մեջ ամբարած մտավոր հարստությունը կաթիլ-կաթիլ փոխանցում նրան՝ թևավորելով և ճախր տալով երեխային՝ իր հոգու և մտքի ճառագայթներով լուսավորում է նրա ճանապարհը: Նա լավ է գիտակցում իր գործի կարևորությունը հայրենիքի նվիրյալ քաղաքացի կրթելու և դաստիարակելու գործում, և ամեն ինչ անում է ուսուցչի վեհ կոչումը բարձր պահելու համար:

Սուսաննա Դադայանը ծնվել է 1973թ. հոկտեմբերի 11-ին, Ստեփանակերտում: 1980թ. հաճախել է Ստեփանակերտի հ. 1 միջնակարգ դպրոցը և 1990թ. ավարտել: 1990թ. աշխատել է Լեռնային Ղարաբաղի կենցաղսպասարկման արտադրական միավորումում՝ որպես մեթոդիստ: 1991-ին ընդունվել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի հայոց լեզու և գրականություն բաժինը: 1996թ. գերազանցությամբ ավարտել է ԱրՊՀ-ն: 1996-ից առայսօր աշխատում է Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ղեկավարում է հայոց լեզվի և գրականության առարկայական մասնախումբը: Չճանաչելով նրա՝ արտաքին տեսքից անգամ կարելի է գուշակել, որ դիմացդ մանկավարժ է՝ կոկիկ արտաքին, գեղեցիկ խոսք, խորաթափանց հայացք ու առինքնող ժպիտ:

Խստապահանջ, արագաշարժ, մասնագիտական խորը պատրաստվածություն ունեցող Ս. Դադայանի ամեն մի րոպեն հաշվարկված է, ռացիոնալ օգտագործված: Իր գործի նվիրյալ, ով հիրավի կարող է հպարտանալ իր սաներով: Նրա աշակերտները առարկայական օլիմպիադաներում և տարաբնույթ մրցույթներում միշտ էլ բարձր ցուցանիշներ են արձանագրել, ինչն ամենօրյա ջանադիր ու հետևողական աշխատանքի արդյունք է:

Ունենալով պարտքի ու պատասխանատվության բարձր զգացում՝ նա սիրով է կատարում իր բոլոր պարտականությունները՝ շահելով և՛ մանկավարժական կոլեկտիվի, և՛ դպրոցականների մեծ վստահությունն ու խորին հարգանքը: Նրա անշահախնդիր աշխատանքը զարմանք ու հիացմունք է առաջացնում բոլորի մոտ: Նա քաջ գիտակցում է, որ դաստիարակելու համար ոչ թե երկար ժամանակ է հարկավոր, այլ կարճ ժամանակի խելացի օգտագործում:

Շիտակ, ուղղամիտ, ըմբոստ, ճշմարտախոս, կեղծիք, բարոյական այլևայլ խաթարումներ չհանդուրժող, արդարության համարձակ մարտիկ, ում համար կենսակերպ է ամեն ինչ՝ հանուն արդարության, ճշմարտության և գեղեցիկի:

Մեսրոպյան գիր ու գրականություն է ուսուցանում ու մեր ոսկեղենիկ մայրենիով գերում ու հրապուրում իր սաներին: Դասավանդում է ժամանակակից մեթոդներով: Նրա յուրաքանչյուր դաս մի ստեղծագործություն է, յուրահատուկ ներկայացում: Նրա դասերին սաները շատ բան են սովորում, մի տեսակ փոխվում են, մտքով հասունանում:

Ամենայն ուշադրությամբ ու պատասխանատվությամբ է կատարում դասղեկական աշխատանքը: Առանձնահատուկ տեղ տալով դպրոցականների հայեցի, հայրենասիրական, բարոյական ու գեղագիտական դաստիարակությանը, հաճախակի է կազմակերպում տարաբնույթ միջոցառումներ, հայրենագիտական էքսկուրսիաներ, վիկտորինաներ:

Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվը շնորհավորում է նրա հոբելյանը, ցանկանում առողջություն, նորանոր հաջողություններ հետագա գործունեության մեջ:

Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

Շնորհավորանք

ԱՄԲՈՂՋ ՀՈԳՈՎ

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի կոլեկտիվն ամբողջ հոգով շնորհավորում է հարգված մանկավարժ Առլենա Սիմոնյանին՝ ծննդյան 60-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Ա. Ալեքսանդրովնան սիրած մասնագիտությամբ աշխատում է 40 տարի: Նա պատկանում է ուսուցիչների այն թվին, որոնք, չնայած մանկավարժական երկարամյա գործունեությանը, տարիների ընթացքում չեն նվազեցրել էնտուզիազմը և ուսուցման գործընթացում ստեղծագործական մոտեցումը:

Նման մարդկանց մասին ասում են, որ նրանք աշխատում են հոգու կրակը տալով, ամբողջովին նվիրված իրենց գործին:

Հոյակապ լեզվագետ, իր գործի իսկական վարպետ Առլենա Ալեքսանդրովնան ինքնուրույն կյանք է ուղարկել ոչ մեկ սերնդի: Նրա շրջանավարտներն այսօր հաջողությամբ աշխատում են կյանքի տարբեր բնագավառներում: Եվ նրանց միավորում է երախտագիտության զգացումն իրենց ռուսերենի ուսուցչի հանդեպ:

Մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում այն բարության ու քնքշանքի, նրբազգացության համար, որը Դուք ներարկել եք Ձեր սաների հոգում ու սրտում:

Հարգելի Առլենա Ալեքսանդրովնա, մաղթում ենք Ձեզ ամուր առողջություն, ընտանեկան երջանկություն և լավ տրամադրություն:

Ձեզ մեր խոնարհումն ենք բերում ուսուցչի ոչ դյուրին Ձեր ամենօրյա աշխատանքում՝ Ձեր համբերության և հասկացողության համար:

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ

ԻՆՔՆԱՆՎԻՐՈՒՄԻ ՍԽՐԱԼԻ ԿՅԱՆՔ

1976 թվականից ուսուցիչ էր: Ուսուցիչ՝ բառի լիակատար իմաստով: Նա ամեն ինչ ընկալում էր յուրովի, սիրում էր մարդուն և նրա աշխարհը: Նա իր գործի նվիրյալն էր: Անսահման էր նրա սերը դեպի երեխաները: Նա իր էությամբ և անձնային բարձր որակներով մի նոր երանգ ու գույն ավելացրեց մանկավարժի վեհ կերպարին: Ստեղծագործող ուսուցիչ էր, և այսօր էլ պահպանվել են նրա մտքի փայլատակումներից մի քանի նմուշներ:

Երբ մենք վարչակազմի շենք մտանք, հյուրերին դիմավորող էվելինա Աղաջանյանն ասաց, որ դահլիճում անկյուն կա պատրաստված, որտեղ տեղադրված են Սլավիկից մնացած ձեռագրեր, հոդվածներ, գնանք ծանոթանանք: Մեզ՝ ինձ ու Արցախի հանրային ռադիոյի լրագրող Ծովինար Գրիգորյանին առաջին հերթին հետաքրքրում էր Ասկերանի շրջանային նախկին «Կարմիր դրոշ» թերթը, որտեղ աշխատել ենք: Թերթի՝ Շարժման տարիների արխիվը չի պահպանվել, ցավոք, նրանից մասունքներ էլի չտեսանք, բայց մեզ համար հայտնություն եղավ մեկ այլ բան. մեր գործընկեր Սլավիկ Միրզոյանն ստեղծագործում էր: Մարգարտաշար ձեռագրով նրա բանաստեղծությունները մեզ ապշեցրին իրենց հասունությամբ: Այդ ինչպե՞ս է եղել, որ խմբագրությունում աշխատելով՝ նա երբևէ չի տպագրել դրանք: Հավանաբար, այստեղ էլ դեր է խաղացել նրա համեստությունը: Եվ տարիներ անց՝ այս տարվա սեպտեմբերի 30-ին, երբ նրա՝ Արցախյան ազգային-ազատագրական շարժման առաջնորդներից մեկի, հիշատակին ծննդյան 60-ամյակի կապակցությամբ հուշցերեկույթ կազմակերպվեց Ասկերանի շրջվարչակազմի նիստերի դահլիճում, հրապարակավ հնչեցին նրա բանաստեղծությունները: Ասել է թե՝ հուշ-երեկոն նաև բացահայտում եղավ:

Միջոցառմանը մասնակցելու էին եկել ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, շրջանի վարչակազմի ղեկավարությունը, Ս. Միրզոյանի աշխատանքային և գաղափարակից ընկերները, համագյուղացիներ: Նրանք նախ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին՝ հանուն հայրենյաց նահատակվածների հիշատակին կառուցված հուշաքարին այցելելով և ծաղիկներ դնելով:

Միջոցառումը թեպետ կոչվում էր հուշ-երեկո, սակայն ընթացավ՝ ինչպես ներկա կգտնվեր հոբելյարը: Այն կառուցված էր երկխոսության վրա. խոսում էր Սլավիկ Միրզոյանը՝ իր բանաստեղծություններով, նամակներով, նրա զգացմունքները երաժշտության լեզվով արտահայտեցին Ասկերանի մշակույթի տան անդամները (տնօրեն-երգիչ՝ Արթուր Սարգսյան, երգչուհի՝ Հերմինե Խաչատրյան, դուդուկահար՝ Արթուր Մկրտումյան, միջոցառումը վարող՝ Նինել Գաբրիելյան), նրա հետ զրուցեցին հարազատները՝ արտահայտելով իրենց կարոտը, և խոսեցին ընկերները՝ վերապրել տալով 88-ի հույզերը, հիշելով նրանց, ովքեր իրենց վրա էին վերցրել այդ տարիների ամենադժվար և ամենածանր պահերը, որոնցից մեկն էլ Սլավիկ Միրզոյանն է եղել:

Հոբելյարի թոռնուհին՝ փոքրիկ Անահիտը, «Խոնարհում» բանաստեղծության արտասանությամբ իր խոնարհումը բերեց բոլոր ազատամարտիկներին: Կինը՝ էվելինան, այսօր Ասկերանի շրջանի սոցապ բաժնի վարիչ, ազատություն տվեց հոգում կուտակված կարոտին, որը նաև յուրատեսակ գնահատանքի կոչ էր. «Կարևոր է մարդու արած-թողածի գնահատականը, որովհետև գնահատելու կարողությունն ազնիվ մարդուն հատուկ առաքինություն է»:

Ս. Միրզոյանի կենսագրության մինչշարժման հատվածն իր դրսևորումներով ասես այնքան էլ չի առանձնանում իր սերնդակիցներից: Ծնվել է 1953թ. սեպտեմբերի 30-ին, Ասկերանի Սառնաղբյուր (Աղբուլաղ) գյուղում՝ Շնավոն և Ծովինար Միրզոյանների ընտանիքում: Նախիջևանիկի միջնակարգն ավարտելուց հետո ստացել է մանկավարժական կրթություն՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորումով: Մանկավարժական գործունեությունը սկսել է Իսմայիլիի շրջանի Քյոլբանդ գյուղում: Մոտիկից տեսել է Ադրբեջանում բնակվող հայերի նկատմամբ վարվող հակահայկական քաղաքականությունը: Մանկավարժական գործունեությունն այնուհետև շարունակել է հայրենի գյուղում, շրջանը ինքնուրույն միավոր դառնալուց հետո՝ շրջժողկրթբաժնում, հետո՝ «Կարմիր դրոշ» թերթում՝ որպես գյուղբաժնի վարիչ, վերջում՝ հայրենի գյուղի կոլվարչության նախագահ: Թերևս առանձնահատուկն այն է, որ որտեղ էլ եղել է, աշխատել է անշահախնդիր, նվիրումով: 1992թ. մայիսի 10-ին Սառնաղբյուր-Վարազաբուն ուղղությամբ Աղդամից տանկային մեծ գրոհ է սկսվում, որին անզոր էր դիմադրել, սակայն գյուղի նախագահ-հրամանատարը գերադասեց չնահանջել և…

Յուրաքանչյուր մարդու կյանքում գալիս է մի պահ, երբ ինքնադրսևորվելու լայն հնարավորություն է ստեղծվում: Այդ պահը Սլավիկ Միրզոյանի համար 88-ն էր, ավելի ճիշտ՝ դրանից մի քիչ էլ շուտ: Բացահայտենք ընկերների վկայակոչումով:

Ասկերանի քաղաքապետ Ալյոշա Գաբրիելյանն ասաց, որ 1980թ. Ս. Միրզոյանը կրթության շրջանային բաժնում աշխատանքի էր անցել որպես գրադարանների գծով մեթոդիստ: Ա. Գաբրիելյանը նրա անմիջական ղեկավարն էր՝ մեթոդկաբինետի վարիչը: Բազմաթիվ անգամներ միասին դպրոցներ են այցելել ստուգման: Եվ նրա մեջ նկատել է բնավորության այնպիսի գծեր, որոնք ճակատագրական եղան Սլավիկ Միրզոյան անհատի ձևավորման գործում: Նրա մեծ սերն ընտանիքի, մոր, հայրենիքի նկատմամբ զգացել է առաջին իսկ օրից: Նրա առաջին մեծ գործը համարում է այն, որ նա շրջանի դպրոցներում տարածեց Շիրազի «Ողբ Ղարաբաղի» անտիպ բանաստեղծությունը, որն այն տարիներին արգելված էր: Երկրորդ նախաձեռնությունը՝ երբ 1987թ. մոտեցավ իրեն՝ կրթության բաժնի վարիչին և ասաց, որ ստորագրահավաք են կազմակերպում Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու համար, և որ նա էլ ստորագրի: Կոմունիստ ղեկավարի համար դժվար էր նման քայլի գնալ, բայց եթե Սլավիկն է ասում՝ ազնիվ, հայրենասեր մեկը, ուրեմն անհրաժեշտ է, և առանց վարանելու Ա. Գաբրիելյանն իր ստորագրությունը դրեց:

Մյուս համարձակ քայլը Նորագյուղի գաղտնի ժողովի կազմակերպումն էր, որով, ըստ էության, Շարժումը դուրս եկավ ընդհատակից և համաժողովրդական բնույթ ստացավ:

Երբ Շարժումը մտավ զինված հակամարտության փուլ, շրջանի ղեկավարներից շատերը, որ հիմնականում Ստեփանակերտից էին, Խոջալուի կողմից ճանապարհը փակ լինելու պատճառով չէին ներկայանում, և Ա. Գաբրիելյանին նշանակեցին շրջանի լիազոր ներկայացուցիչ (1992թ. մարտ), նա Ս. Միրզոյանին, որն այդ ժամանակ Սառնաղբյուրի կոլտնտեսության նախագահն էր, առաջարկեց իր տեղակալ: Սակայն վերջինս ասաց. «Որ գամ, ի՞նչ կասեն իմ համագյուղացիները, ժողովուրդը: Ես չեմ կարող իմ գյուղացիներին անտեր թողնել և գալ Ստեփանակերտում կամ Ասկերանում նստել»: Ու գնաց: Դա նրանց վերջին հանդիպումն էր:

Ս. Միրզոյանին ոչ ոք զոհված չի տեսել: Նրան տեսել են նռնականետը ձեռքին մեն-մենակ թշնամու զրահատանկի դեմ կռվելիս: Ա. Գաբրիելյանի համոզմամբ՝ նա զոհվել է քաջաբար՝ գիտակցաբար գնալով մահվան դեմ, ընկնելով իմացյալ մահով:

Արցախյան շարժման առաջնորդներից, Ասկերանի նախաձեռնող խմբի ղեկավար Սլավիկ Առուշանյանի կարծիքով, ստեղծագործ անհատ, իր ընտանիքին, գյուղին ու հայրենիքին նվիրված Ս. Միրզոյանի կյանքը դաստիարակության վառ օրինակ է հետագա սերունդների համար: Նա կարևորեց նրա համարձակ քայլերը, որոնք կոմունիստական ռեժիմի օրոք շատ դժվար էր կատարել: Ստորագրահավաքը (նա հիմնականում Նախիջևանիկի ենթաշրջանի գյուղերում էր կազմակերպել), ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը (ինքն էլ ղեկավարում էր հայրենի գյուղի ջոկատը), զենք-զինամթերք հայթայթելը և իրենց կողմից էլ դրանց գաղտնի պատրաստումը նրա գործունեության դեռ մի մասն են:

Ի դեպ, միջոցառումը տեղի էր ունենում պատմական դահլիճում: Այնտեղ, որտեղ 1988թ. փետրվարի 12-ին տեղի ունեցավ շրջանի ակտիվի նիստը, որը հակահարված տվեց ԱԴՐԿԿ և ԽՄԿԿ Կենտկոմներից ու մարզկոմից ժամանած ներկայացուցիչներին, որոնք եկել էին Շարժումը կասեցնելու: Ս. Միրզոյանը մեծ համարձակություն ցուցաբերեց այստեղ՝ գաղտնի ձայնագրելով ելույթները՝ հետո դրանք ուղարկելով Երևան:

Ս. Առուշանյանն ընդգծեց նաև նրա գործունեության մեկ այլ հատված. Հայաստան ուղարկված առաջին պատվիրակության կազմում, որը նպատակ ուներ Արցախի ձայնը հասցնել այնտեղ, հանդիպումներն Իգոր Մուրադյանի, Վազգեն Մանուկյանի, գրող Սամվել Շահմուրադյանի և մյուսների հետ, առաջին հանրահավաքի անցկացումը, որտեղ նա ելույթ ունեցավ, և դրանից հետո համաժողովրդական ալիք բարձրացավ Հայաստանում՝ ի պաշտպանություն Ղարաբաղի:

Երբ տեղի ունեցան Սառնաղբյուրի այդ ահավոր դեպքերը, Ս. Առուշանյանը հաջորդ օրը, անտեսելով վտանգը, բառացիորեն գնդակների տարափի տակ անցավ թշնամու թիկունքը՝ Ս. Միրզոյանի հետքը որոնելու: Վերջինիս համոզմամբ և ականատեսների պատմածով, հնարավոր չէր, որ նա կենդանի մնացած լիներ: Թշնամին նրա գլխի համար մեծ գումար էր նշանակել. հավանաբար, անգամ մահացած վիճակում նրան տարել էին մարտադաշտից:

Ընթերցվեց նաև Իգոր Մուրադյանի՝ Շարժման գլխավոր գաղափարական առաջնորդի, խոսքը, ով նույնպես Ս. Միրզոյանի ընկերն էր: Նրա բնութագրմամբ՝ Ս. Միրզոյանն ազնիվ, համեստ, անշահախնդիր, անձնվեր մի անձնավորություն էր՝ Ղարաբաղյան շարժման անհրաժեշտության խոր հավատով և նրա առաջին դեմքերից:

Գրող, «Կարմիր դրոշ» թերթի խմբագիր, Ասկերանի նախաձեռնող խմբի անդամ Կոմիտաս Դանիելյանը Սառնաղբյուրի դեպքերի կապակցությամբ նույն օրը երեկոյան խոսք է գրել ընկերոջ մասին՝ հիմնվելով Ս. Միրզոյանի ականատես համագյուղացիների պատմածների վրա, որոնք մազապուրծ, տուն-տեղ կորցրած, հարազատների մասին լուր չունենալով հանդերձ՝ Ս. Միրզոյանի անունն էին մրմնջում և ասում, որ կփրկվեր, եթե փախչեր, բայց՝ «Դու քեզ ծնած ու ապավինած գյուղիդ մասին էիր մտածում, գյուղիդ երեխաների, մայրերի ու աղջիկների, բլրալանջից քեզ նայող Շնավոն հորդ գերեզմանի: Դու չէիր կարող այդ ամենը թողած՝ վտանգի մասին մտածել»,- գրել և հուշ-երեկոյին էլ կրկնեց Կ. Դանիելյանը: Նրա խոսքով՝ ըստ ականատեսների, երկու տասնյակից ավելի հրասայլ, գրեթե այնքան, ինչքան գյուղի ծխերն էին, թշնամին նետել էր գյուղի վրա: Ս. Միրզոյանն զգում էր այդպիսի հարձակման անխուսափելիությունը, քանի որ նման փորձեր էլի էին եղել, բայց մտքով չէր անցնում երբևէ լքել գյուղը:

ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը խոստովանեց, որ իրենց՝ շրջանի դպրոցականների համար Ս. Միրզոյանն այն դեմքերից էր, ում ուզում էին նմանվել: «Նրա կերպարը մեզ այսօր էլ սովորեցնում է ապրել»,- ասաց նա:

Երեկոյին ցուցադրվեց Ասկերանի «Բերդ» թերթի խմբագիր Վալերի Պետրոսյանի պատրաստած փոքրիկ ֆիլմը Ս. Միրզոյանի մասին՝ լուսանկարների և նրա համագյուղացիների պատմածների հիման վրա: Ի դեպ՝ Վ. Պետրոսյանը Շարժման գլխավոր դեպքերի եզակի լուսանկարների հեղինակն է: Ֆիլմից, ինչպես ԱԺ նախագահը նկատեց, Ս. Միրզոյանի մասին միայն մի ընդհանրացում կարելի է անել. բոլորը միաբերան նրան «լավ» բառով էին բնութագրում. լավ մարդ՝ ընտանիքին, ընկերներին, հայրենիքին նվիրված: Ասել է թե՝ որտեղ էլ աշխատել է, իր գործը կատարել է պարտքի ու պատասխանատվության մեծ զգացումով, եղել է «լավ հայ, լավ ղարաբաղցի:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար Ս. Միրզոյանը պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Վերջում «խոսքը տանք» Սլավիկ Միրզոյանին, որի բանաստեղծական տողերը, կարծում ենք, ասվածի գեղարվեստական խտացումն են.

Ես հայ եմ ծնվել մեծ Ղարաբաղում
Ու հայ մեծացել լեռների գրկում,
Ես շատ եմ քայլել բոբիկ ոտքերով
Իմ Ղարաբաղի քարոտ ճամփեքով:
Ես չեմ զգացել իմ մերկ ոտքերին
Ոչ ցավ, ոչ ծակոց,
Եվ մանուկ սիրտս երբեք չի լացել
Միշտ բարձունք տանող
Այդ դժվար ուղին հաղթահարելուց:
Եվ թող ինձ ասեն՝ այս խենթ պատանին
Սարերը ընկած սեգ Ղարաբաղի,
Երգեր է ձոնում իր երկրի համար:
Եվ դա կլինի մեծ փորձ ինձ համար:
Ես հայ եմ ծնվել իմ լեռնաշխարհում
Ու հայ կմնամ հայ Ղարաբաղում:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՖԻԶԻԿԱՅԻ ՄՐՑՈՒՅԹ-ԵՐԵԿՈՆԵՐ

Արտադասարանական պարապմունքների համակարգում ամենահետաքրքիր և արդյունավետ ձևերից մեկը ֆիզիկայի մրցույթ-երեկոն է: Նախընտրելի է կազմակերպել տվյալ դպրոցում կամ հարևան դպրոցների զուգահեռ դասարանների միջև, գյուղական դպրոցներում՝ ավագ դասարանների աշակերտների միջև: Թիմի կազմում ընդգրկված աշակերտները պետք է աչքի ընկնեն ոչ միայն ֆիզիկայի խորն իմացությամբ, այլև բանավոր խոսքի սրամտությամբ, հարցադրումների պատասխանները որոշելու արագ կողմնորոշմամբ ու հնարամտությամբ: Մրցույթ-երեկույթին խնամքով նախապատրաստվելու համար անհրաժեշտ են. առաջին՝ ճշտել երեկոյի թեմատիկան, երկրորդ՝ ընտրել թիմերի կազմը ու նրանց ավագներին, երրորդ՝ որոշել ժյուրին կամ, ինչպես ասում են, «արդարության կոլեգիայի կազմը», չորրորդ՝ որպես տնային առաջադրանքներ սովորողներին հանձնարարել.

ա) երեկոյի թեմայի վերաբերյալ լուծել մի շարք որակական և փորձարարական խնդիրներ,

բ) լույս ընծայել թեմատիկային համապատասխան պատի թերթ,

գ) կազմել մի շարք ֆիզիկական հանելուկներ,

դ) կազմակերպել ֆիզիկական որևէ մեծության, երևույթի՝ իներցիայի, շփման ուժի, բնության ուժերի դատ:

Այժմ ներկայացնենք Շփման ուժի «դատը»: Այն կարելի է հանձնարարել որպես տնային առաջադրանք միջոցառում կազմակերպելու համար:

ԴԱՏ՝ ՇՓՄԱՆ ՈՒԺԻ ԴԵՄ

Դահլիճը. Նստած են դատի մասնակիցները, քարտուղարուհին կանգնում է տեղից և հայտարարում.

- Ոտքի՛, դատարանն է գալիս:

Դատավորը մուրճիկով հարվածում է և ասում.

- Հարգելի՛ դատի մասնակիցներ, այսօր լսվում է Շփման ուժի, նրա չարագործությունների մասին: Նա մեղադրվում է մի քանի հոդվածներով՝

1. Նրա մեղքով մեխանիզմները և հարմարանքները մաշվում են:

2. Աչքի համար անտեսանելի, թեկուզ չնչին չափով փոփոխվում են մեքենաների դետալների ձևը, չափերը, ինչն էլ հանգեցնում է դրանց փչացման: Ավելորդ ծայներ են առաջանում, իջնում է դետալների որակը, և իհարկե, վթարների առաջացման պատճառ են դառնում:

3. Նա մեղադրվում է կոշիկների, շորերի մաշվելու և այլ նենգ գործերի համար:

Այս մեղադրանքների մասին կխոսեն վկաները: Համոզված եմ, որ նրանց վկայությունները ձեզ կհամոզեն, թե ով է Շփման ուժը:

Այսօր մենք մանրամասն կխոսենք առաջադրված հարցերի մասին ու արդարացի որոշում կհանենք, իսկ Շփման ուժի մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար լսենք մեղադրող կողմին:

- Պարոն պետական մեղադրող, սկզբում լսենք Ձեզ, մեղադրող կողմի, հետո՝ պաշտոնական կողմի վկաներին:

Այժմ ներս բերեք մեղադրյալին:

Ներս են մտնում մեղադրյալը՝ ձեռքերը կապած, հետևից ոստիկանը՝ հրացանը ձեռքին:

Դատավոր - Պարոն Շփման ուժ, ներկայացե՛ք:

Շփման ուժ - Շփման ուժ, ավելի ճիշտ, Դադարի շփման ուժ, Գլորման շփման ուժ, Սահքի շփման ուժ:

Դատավոր - Դուք ձեզ մեղավոր ճանաչո՞ւմ եք:

Շփման ուժ - Իհարկե՝ ո՛չ:

Դատավոր - Այժմ դատարանին մանրամասն բացատրեք, թե ինչու Դուք այդքան անուններ ունեք:

Շփման ուժ - Երբ մարմնի վրա հորիզոնական ուղղությամբ ուժ է ազդում, բայց այն մնում է դադարի վիճակում, նշանակում է՝ մարմնի վրա ազդում է ևս մի ուժ՝ հակառակ ուղղված կիրառված ուժին, և համակշռում է այն: Եվ ես այդ ուժն եմ: Այս դեպքում ինձ անվանում են Դադարի շփման ուժ:

Իսկ երբ ազդող ուժը դառնում է դադարի շփման ուժի առավելագույն արժեքից փոքր-ինչ մեծ, մարմինը շարժվում է, և այստեղ դադարի շփման ուժին փոխարինում է սահքի շփման ուժը՝ դարձյալ ես, ու այս դեպքում միշտ ուղղված եմ մարմնի շարժման ուղղությանը հակառակ: Հարգելի՛ դատարան, ասեմ նաև, որ եթե շփվող մարմինների մակերևույթները ողորկ են, ես փոքրանում եմ, բայց չեմ անհետանում: Իսկ եթե մարմինը ոչ թե սահում, այլ գլորվում է մեկ այլ մարմնի մակերևույթով, առաջանում է Գլորման շփման ուժ, և իմ ուղղությունը հակառակ է ուղղված մարմնի գլորման ուղղությանը: Պարոն դատավոր, ահա որտեղից են առաջացել իմ երեք անունները:

Դատավոր - Խոսքը տրվում է դատախազին:

Դատախազ - Պարոն Շփում, Դուք մեղադրվում եք համամարդկային օրենսգրքի մի շարք հոդվածներով:

Նախ՝ երկար տարիներ դուք փչացրել և անգործության եք հանգրել բազմաթիվ հաստոցներ ու մեքենաներ: Հարգելի դատարան, նշեմ, որ դրանց թիվն այժմ հասնում է միլիոնների: Սա որակվում է որպես երկրին հասցված մեծ չափերի վնաս:

Երկրորդ՝ պարոն Շփումի պատճառով մենք չենք կարող արագ շարժվել, շարժակառքերը, ավտոմեքենաները՝ արագ սլանալ: Միշտ ստիպված ենք ահագին ժամանակ ծախսել մի բնակավայրից մյուսը փոխադրվելու համար, օգտագործել մեծ քանակությամբ քսուկներ և անընդհատ փոխել մեխանիզմների առանցքակալները: Երրորդ՝ հաճախ Շփման պատճառով առաջանում են կրակի կայծեր, որոնք կարող են հրդեհի, մարդկանց մահվան պատճառ դառնալ:

Հարգելի՛ դատարան, ես վերջացրի իմ մեղադրական խոսքը:

Դատավոր - Այժմ լսենք մեղադրող կողմի վկաներին:

Վկա 1 - Ես առանցքակալների պետական գործարանի բանվոր եմ: Բոլոր հաստոցներում, մեքենաներում Շփման ուժի պատճառով տաքանում և մաշվում են շարժվող դետալները: Մեր գործարանը ստիպված է այդ չարագործի պատճառով անընդմեջ, առանց ազատ օրերի աշխատել:

Վկա 2 - Ես ուսուցիչ եմ, միաժամանակ ակտիվ կերպով զբաղվում եմ դահուկային սպորտով: Հերթական մրցումների ժամանակ իմ աշակերտները, որոնք իմ ակտիվ երկրպագուներն են, համոզված էին, որ անպայման ես հաղթելու եմ: Ամեն ինչ լավ կլիներ, եթե չլիներ Շփման ուժը: Ես մոռացել էի մրցումներից առաջ յուղել, քսուկապատել դահուկները: Ու անընդհատ հետ էի մնում, և ո՛չ մի խոսք՝ հաղթանակի մասին: Հարգելի դատարան, այդ նա՝ Շփման ուժն է ընդդիմացել իմ շարժմանը, ու ես ոչ միայն պարտվեցի, այլև կորցրի իմ աշակերտների վստահությունը:

Վկա 3 - Ես կոնստրուկտորական բյուրոյի ինժեներ եմ: Երկար տարիներ է՝ մեր գիտնականների մեկ խումբ աշխատում է ստեղծել գերարագ ինքնաթիռ, բայց ցանկալի արդյունքների չի հասնում: Հարգելի դատարան, մեղավորը Շփման ուժն է, քանի որ նրա պատճառով օդը շատ է տաքանում, և անջատվում է մեծ ջերմաքանակ:

Վկա 4 - Երկրի արհեստական արբանյակները հավերժորեն չեն կարող պտտվել երկրի շուրջը: Մթնոլորտի վերին շերտերը լիցքավորված են, ինչն էլ արգելակում է արբանյակի շարժումը, պտտման հետագծի շառավիղն անընդհատ փոքրանում է, և վերջիվերջո, արբանյակը մթնոլորտի խիտ շերտերում այրվում է:

Վկա 5 - Ես ատամնանավակն եմ: Ունեմ շատ եղբայրներ ու քույրեր: Մենք ժամացույցի մեջ ենք ապրում, կատարում ենք շատ պատասխանատու աշխատանք՝ հաշվարկում ենք ժամանակը: Պարոն Շփումն անիվների առաջ անընդհատ ար-գելք է դնում, անում է ամեն ինչ, որ խանգարի մեր անխափան աշխատանքին: Նրա ներկայությունը փչացնում է մեր առողջությունը, մեր ատամները մաշվում են, և սկսում ենք վազել, սահել մեկս մյուսի վրայով: Մենք օրեցօր փչանում ենք այս մեղադրյալի պատճառով: Խնդրում եմ օգնել մերկացնել պարոն Շփման ուժին:

Վկա 6 - Ես ատաղձագործ եմ: Հաճախ եմ ստիպված լինում սղոցի ատամներն ուղղել, քանի որ Շփման ուժի պատճառով դրանք հաճախակի են ծռվում, ինչն էլ պատճառ է դառնում իմ վատ աշխատանքի, հումքի գերածախսի: Օգնեցե՛ք ինձ:

Վկա 7 - Ես ձկնորս եմ, երկար տարիների ձկնորս: Մի քանի օր առաջ մի խոշոր ձուկ էի որսացել: Գիտեք, հարգելի դատարան, որ ձկան մարմինը պատված է լորձաթաղանթով, որը փոքրացնում է Շփման ուժը: Մեղադրվող Շփման ուժի պատճառով ձուկը ձեռքիցս սահեց ու նորից ընկավ գետը, և դատարկ վերադարձա տուն:

Դատավոր - Մեղադրական կողմը ունի՞ ուրիշ վկաներ:

Դատախազ - Ո՛չ, հարգելի՛ դատարան:

Դատավոր - Այժմ դատարանի դահլիճ են հրավիրվում պաշտպանական կողմի վկաները:

Վկա 1 - Ես երկար տարիների վարորդ եմ: Լավ եմ հասկանում մեքենաների հետ կապված ամեն ինչ: Հավատացնում եմ ձեզ, բարեկամնե՛ր, հարգելի՛ դատարան, Շփման ուժն է կասեցնում մեքենաների շարժումն արգելակման պահին: Տրանսպորտը մեր կյանքի անբաժան մասն է, առանց նրա չենք կարող կապ հաստատել քաղաքների, երկրների միջև: Պատկերացնո՞ւմ եք մեր կյանքն առանց տրանսպորտի, իսկ տրանսպորտը՝ առանց արգելակների: Շնորհակալություն պարոն Շփման ուժին:

Վկա 2 - Ես մասնագիտությամբ կենսաբան եմ: Հավատացնում եմ, որ շատ բույսեր ու կենդանիներ չեն կարող գոյություն ունենալ առանց Շփման ուժի (ցուցադրվում է բույսերի, կենդանիների նկարների մի ամբողջ սլայդ):

Վկա 3 - Ես դպրոցական եմ: Ամբողջ գիշեր անհանգիստ էի, չէի կարողանում քնել, վերմակս վրայիցս հա ընկնում էր: Դժվար էր բարձրացնել՝ վերմակս անընդհատ ձգտում էր սահել ու ընկնել ձեռքիցս: Առավոտյան մի կերպ արթնանալով, չճանաչեցի իմ ննջարանը: Պարզվում է, որ ես քնել եմ հատակին, իսկ սենյակիս անկյունում, չգիտես ինչու, հավաքվել էին իմ բոլոր իրերը: Պարզ երևում է, որ Շփումն անհետացել էր, որի պատճառով էլ ես ընկել էի անկողնուց, իսկ իմ իրերը ձգողականության ուժի պատճառով շարժվել էին մի անկյուն, որտեղ հատակը փոքր-ինչ ցածր էր: Ես փորձում էի բարձրանալ, բայց ամեն անգամ ընկնում էի և ստիպված էի օգտագործել ձեռքերս, այսինքն՝ շարժվել չորս թաթերով (մեծացնելով հենման մակերեսը) ու մի կերպ հասա լվացարանիս: Այստեղ էլ լվացվելիս օճառն էր անընդհատ ընկնում ձեռքիցս, և ինչքան ձգտում էի օճառով լվացվել, թանկագին բարեկամներ, չէր հաջողվում: Չկարողացա անգամ հագնվել. անդրավարտիքս անընդհատ ցած էր սահում, իսկ բլուզս ուսերիցս ընկնում էր: Խոհանոցում անհաջող փորձում էի վերցնել դանակը՝ հաց կտրելու: Դանակն իրեն պահում էր այնպես, ինչպես օճառը: Կաթը խմեցի կատվիս նման, որովհետև չհաջողվեց երկու ձեռքով բաժակս վերցնել: Անհետացել էր Շփումը, և ինչքան երջանիկ կլինեի, հարգելի դատարան, եթե նորից հայտնվեր Շփման ուժը:

Դատավոր - Խոսքը տրվում է փաստաբանին:

Փաստաբան - Մեծարգո՛ դատավոր, հարգելի՛ պետական մեղադրող և նիստի մասնակիցնե՛ր: Ուրախ եմ ողջունել ձեզ այս դահլիճում, որտեղ լսվում է Շփման ուժի գործը: Ես նրա պաշտպանն եմ ու այժմ պաշտպանում եմ նրա շահերը, ինչպես նաև ձեր բոլորի շահերը: Մեծարգո՛ դատավոր, հարգելի՛ մասնակիցներ, մի պահ պատկերացրեք, որ մեր քաղաքը դանդաղ լքում է Շփման ուժը: Սարսափելի տեսարանի ականատեսը կդառնանք մենք. շարժվող մեքենաները կբախվեն իրար՝ չունենալով արգելակման հնարավորություն: Շարժվող հետևակը չի կարող զսպել մեքենաների ընթացքը, որը նրանց ուժերից վեր է:

Խանութի աշխատողների առջև կսկսեն սահել կոշկեղենը, շորեղենը, սննդամթերքները և այլն: Եվ բավական է իմ պաշտպանյալը մի պահ հայտնվի քաղաքում, ու ամեն ինչ կընկնի իր տեղը, կյանքը քաղաքում կխաղաղվի: Եվ ինչ, իմ պաշտպանյալն անդատապարտելի է, նա անմեղ է, քանի որ ոչ Դուք, մեծարգո՛ դատավոր, ոչ Դուք, պարո՛ն դատախազ և ոչ էլ ներկաներից որևէ մեկը չեք կարող մի քայլ անգամ անել դահլիճում՝ առանց Շփման ուժի առկայության: Իրավունք ունե՞նք, արդյոք, նրան դատելու: Իմ խորին համոզմամբ՝ ո՛չ: Նա երկրի ստեղծման օրից գոյություն ունի, և առանց նրա կյանքը երկրի վրա անհնար է: Վերջ:

Դատավոր - Դատարանը գնում է խորհրդակցության:

Քարտուղարուհի - Ոտքի՛, դատարանն է գալիս:

Դատավոր - Դատարանը ուշադիր լսելով և՛ մեղադրող, և՛ պաշտպանող կողմերին, հաշվի առնելով մեղադրյալի գործողությունների որոշ բացասական կողմեր, եկավ այն եզրակացության, որ մեղադրանքը չափազանցված է, և վճռեց.

Հաշվի առնելով Շփման ուժի դրսևորման դրական կողմերը, նրան արդարացնել, իսկ նիստի մասնակիցներին կոչ անել ուսումնասիրել այդ հրաշք գիտությունը՝ ֆիզիկան, նրա օրենքները, որովհետև կյանքն առանց ֆիզիկայի օրենքների իմացության շատ դժվար է:

Դատավորը մուրճիկով հարվածում է և հայտարարում դատի ավարտը:

Ալինա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ասկերանի շրջանի Խնաձախի միջն. դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի

Շնորհավորանք

ՇՆՈՐՀԱՇԱՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ



Գյուղը՝ Աստղաշենը, շրջապատված իր բերրի դաշտերով ու այգիներով, իր հերոսական անցյալով ու հպարտ կեցվածքով Արցախի նշանավոր բնակավայրերից է: Այն հայտնի է իր նշանավոր մարդկանցով:

Կան անհատներ, որոնց մասին գրելիս հպարտություն ես զգում, և սովորական բառերով դժվար է նկարագրել նրանց: Նմաններից է Աստղաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն Սլավա Գրիգորյանը:

Ծնվել է 1953թ. հոկտեմբերի 3-ին, Ասկերանի շրջանի Դաշբուլաղ գյուղում: Գերազանց ավարտելով հարազատ գյուղի ութամյա դպրոցը՝ ուսումը շարունակել է Պատարայի միջնակարգում:

1970թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը և այն ավարտել 1974-ին: Աշխատանքային մկրտությունը ստացել է Դահրավի ութամյա դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1986թ. տեղափոխվում է հայրենի գյուղի կրթօջախ՝ աշխատում որպես փոխտնօրեն և մաթեմատիկայի ուսուցիչ:

Արցախյան ազատագրական շարժման տարիներին գյուղը զգաց Սլավա Գրիգորյանի կարիքը՝ որպես եռանդուն, հայրենասեր, հմուտ կազմակերպչական ունակության տեր երիտասարդի: 1988թ. ընտրվում է Դաշբուլաղի «Հոկտեմբեր» կոլտնտեսության նախագահ, իսկ 1988-ից՝ համայնքի ղեկավար: Անմնացորդ նվիրումով մասնակցում է հայրենի գյուղի խաղաղ ու բարգավաճ ապագան կերտելու ազգանպաստ գործին:

Լինելով բանիմաց և հմուտ մանկավարժ՝ նա իր երջանկությունը գտնում է մասնագիտական աշխատանքում: 2008թ. հարազատ դպրոցում նշանակվեց տնօրեն: Գործին լավ գիտակ լինելով՝ կարճ ժամանակում սկսում է վայելել աշակերտական ու մանկավարժական կոլեկտիվների սերն ու հարգանքը: Տնօրենի ուշադրության կենտրոնում այսօրվա մատաղ սերնդի ուսումնադաստիարակչական աշխատանքներում ծառացած խնդիրներն են: Դպրոցում ստեղծելով համակարգչային կաբինետ՝ բոլոր ուսուցիչներից պահանջում է դասապրոցեսը կազմակերպել՝ օգտվելով համակարգչից, ժամանակակից դասավանդման մեթոդներից: Նա մեծ պատասխանատվությամբ է կատարում տնօրենի իր պարտականությունները: Նվիրվածություն, անսպառ սեր դեպի սաները, հարգանք ու կարգապահություն, օրինականություն և հոգատար վերաբերմունք կոլեկտիվի անդամների, դպրոցի ու այն ամենի նկատմամբ, ինչը կապված է դպրոցական կյանքի և ուսումնադաստիարակչական գործընթացի հետ:

Դպրոցում հաճախ են կազմակերպվում բազմազան հետաքրքիր միջոցառումներ, ցերեկույթներ: Նա ամենուրեք է... իսկական նվիրյալ:

Այսօր մեր տնօրենը 60 տարեկան է: Բայց նա միայնակ չէ, հոբելյար է նաև նրա կինը՝ վաստակաշատ մանկավարժ Զոյա Կարապետյանը: Նրանք միասին անմնացորդ նվիրումով կրթում ու դաստիարակում են մատաղ սերնդին: Եթե ուսուցիչն իր մեջ զուգակցում է սերը գործի ու աշակերտների նկատմամբ, նա կատարյալ ուսուցիչ է: Նրանք նաև օրինակելի ամուսիններ են և ծնողներ: Ծնել ու դաստիարակել են երեք խելացի զավակներ:

Մեզ մնում է միայն ասել՝ սիրելի տնօրեն, շնորհավոր Ձեր 60-ամյակը, Ձեզ՝ երջանկություն, անսպառ եռանդ, ամուր առողջություն, ստեղծագործական մտքի նոր թռիչքներ:

Ասկերանի շրջանի Աստղաշենի Ժան Անդրյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՅԼԱԶԱՆ

ԵԿԵՔ ՀԱՅԱՎԱՐԻ՛ ՈՒՐԱԽԱՆԱՆՔ

Մեր ազգային զարթոնքի 25-ամյա պատմությունը բազում ձեռքբերումների, մարդկային կորուստների գնով սեփական ժողովրդի ճակատագրի կերտման, ազգի հարատևման և մեր դառն ապրումների ամրագրողը դարձավ: Այդ զարթոնքի շնորհիվ վերջապես գտանք հայի մեր կերպարը, դպրոցները ձերբազատվեցին օտարահունչ ծրագրերից, դասագրքերից, ու հայ դպրանոցը վերստին իր ազգային կերպարը վերագտավ:

Սակայն ազգային զարթոնքը մաքուր հայերենով խոսելու, դպրոցում ազգային ծրագրերով կրթություն իրականացնելու, պետական լեզուն հայերենը դարձնելու մեջ չէ միայն: Այս բոլորով հանդերձ, մենք պետք է մոտ կանգնենք մեր ազգային մշակութային ակունքներին, մեր հարուստ մշակութային կերպարին, մեր տաղանդավոր երգահանների երգերին, ազգային պարերին, հաճախենք Հայ Առաքելական եկեղեցի, աղոթենք առ Աստված: Չժխտելով համաշխարհային դասական երաժշտությունը՝ մեր ականջը պետք է լսի Կոմիտաս, Օրբելյան, Մանսուրյան, Ամիրխանյան, Չուխաջյան, Ավետիսյան: Մեծ ցավ ու գաղթ ապրած հայը կարողանում է շտկել իր մեջքը, նաև ուրախանալ, հարսանիք անել, ծնունդ անել և այդ ուրախ սեղաններին պարել ու երգել... Սակայն ազգային զարթոնքի պարագայում մենք երբեմն շեղվում ենք մեր ազգայինից և, չգիտես ինչու, ուրախանում, պարում ոչ ազգային երաժշտության տակ, երբեմն էլ բուլվարային երգերի ներքո: Այո, հայը կարողանում է երգել ու պարել աշխարհի բոլոր ժողովուրդների երաժշտության տակ՝ դրանով փաստելով, որ ինքը ոչ մի ազգայինի նկատմամբ խտրական չէ, բայց եկեք համաձայնենք, որ ընտանեկան ուրախությունները պետք է ազգային նկարագիր ունենան:

Մի առիթով Երևան մեկնելու ճանապարհին նստած էի երևանաբնակ մի տարեց մարդու հարևանությամբ: Նա մեծ ցավով ու դառն ափսոսանքով պատմեց, որ նախորդ իր ճանապարհորդության ժամանակ վարորդն ադրբեջանական երգ էր միացրել: Իր և ավտոբուսի մնացած ուղևորների կողմից դիտողություն ստանալուց հետո միայն դժկամությամբ փոխեց սկավառակը: Մի՞թե մեր տղաներն իրենց կյանքը զոհաբերել, Մայր Հայաստանի ճանապարհը բացել են, որ ճանապարհին լսվի ադրբեջաներեն կամ թուրքերեն երաժշտությունը:

Վերջերս երիտասարդ, գեղեցիկ մի ընտանիքի կողմից հրավիրվեցի իրենց ընտանիքում երկար սպասված բալիկի կնունքին: Հուրախություն ինձ և իմ սեղանակիցների՝ ամբողջը շնչում էր հայեցի: Հանդիսությունը վարում էր երիտասարդ ու բազմաշնորհ հաղորդավար Աշոտ Սարգսյանը: Նրա գեղեցիկ ու հակիրճ խոսքը համեմվում էր Սևակի, Սահյանի, Շիրազի բանաստեղծություններով: Իսկ երիտասարդներն ուրախանում էին Ալ. Հեքիմյանի, մեր ժամանակների մյուս՝ «Բարդիները խշշացին», «Ծաղիկներ, ծաղիկներ» և այլ հին ու նոր հայկական երգերի ու մեղեդիների տակ: Թնդաց «Քոչարին», և մի խումբ երիտասարդներ մեծ ոգևորությամբ ու խանդավառությամբ սկսեցին պարել մեր ազգային պարը՝ բավականություն և մեծ էներգիա հաղորդելով դահլիճին: Ինչպես Մեծն Կոմիտասն է ասել, «Պարն է որոշում յուրաքանչյուր ազգի քաղաքակրթության աստիճանը: Հրավիրվածներից երիտասարդ Դավիթ Հակոբյանը կատարեց Հ. Շիրազի «Իմ բալիկ» երգը: Այո, այստեղ մեր ուրախությունը հայեցի էր և ազգային: Եվ դա ամենևին էլ պատահական չէր, քանզի երիտասարդ ընտանիքը որպես երաժիշտներ ընտրել էր մասնագիտացված ազգային երաժշտական կրթություն ստացած երաժիշտների՝ Աշոտ Լալայան, Սիմոն Սարգսյան, Լեռնիկ Զաքարյան, Ալբերտ Ադամյան, Գարիկ Բալասանյան: Նրանց ընտրած երաժշտական ծրագիրը ոգևորել էր նաև իմ սեղանակիցներին, ովքեր կրթության ոլորտի աշխատողներ էին: Կարծում եմ, դահլիճում գտնվող բոլոր հրավիրվածները նույնպես ազգային մեծ ոգևորություն ապրեցին, քանզի բոլորը մեր անկախ պետությունը ներկայացնող կառույցներից էին:

Սրտանց շնորհակալություն եմ հայտնում երիտասարդ ընտանիքին՝ իրենց ընտանեկան ուրախությունն այսպես ճաշակով մատուցելու և հայեցի մոտեցման համար: Իմ և իմ ընկերների երախտագիտությունն եմ հայտնում նաև երիտասարդ հաղորդավարին ու պրոֆեսիոնալ երաժշտական խմբին, ովքեր փորձեցին ու կարողացան այդ միջոցառմանը ազգային, հայեցի շունչ տալ:

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ-ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ
Ստեփանակերտի քաղաքապետարանի մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության բաժնի պետի պաշտոնակատար

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆՎՈՒՄ

Հանրակրթական դպրոցների տնօրեններին և ուսուցիչներին, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված են ըստ ուսումնական առարկաների թեմատիկ և կիսամյակային ստուգումների առաջադրանքների տետրեր, որոնց կիրառմամբ առավել արդյունավետ կկազմակերպվեն սովորողների գիտելիքների ստուգումները:

Առաջարկվում է ծնողական կոմիտեների հետ քննարկել և համաձայնության դեպքում դրանք ձեռք բերել Ստեփանակերտի «Էդիթ Պրինտ» գրատնից:

ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարություն

ՍԿՍՎԱԾ Է

ԼՈՒՍԱՐԱՐ-ի

2014 թվականի բաժանորդագրությունը «ԼՈՒՍԱՐԱՐ»-ը հաղորդակցման հուսալի ամբիոն է: «ԼՈՒՍԱՐԱՐ»-ը՝ անաչառ զրուցակից ու խորհրդակից: «ԼՈՒՍԱՐԱՐ»-ը Արցախի հո·ետոր ներուժի խրատացումն է: Տարեկան բաժանորդա·ինը՝ 3000 դրամ:

ԱՐՑՈՒՆՔԻ ԿԱԹԻԼՆԵՐ ՉԵՆՔ ԹՈՂՆԻ

Երբ մարդկային ցավը վերելքներ է փնտրում, ոգին փշրվում է աներևույթից, և նորից գոյը դառնում է ճղճիմ ու անիմաստ: Երանի՜ քեզ, հավերժություն, որ հավիտենական ճակատագիր ունես և կարողանում ես անելիքդ անել ու անգամ մխացող սպի չունես:

Այսօր մահը մարդու հանդեպ դարձել է քմահաճ: Երանի նրան, ով կիսատ-պռատ չի թողել ամեն ինչ: Երանի նրան, ով հորիզոնից այս կողմ չի նայում իր ամուսնու կոտրված մեջքին, իր ծնողի ու զավակի մրմռացող սրտից հոսող արյուն-արցունքին, իր ընկերների ափսոսանք-հառաչին:

Կարկուտից ծեծված տեղը նորից ծվատվեց, արևն այս անգամ ջերմ չգուրգուրեց, և վայրկյանը ծղրտացող թռչունի նման գուժեց մահախոսականը...

Դժվար էր նայել մի մարդու աչքերի մեջ, ով ժպտերես, կատակը շուրթերին, իր մեջ խորունկ ցավն ամբարած, գնում էր դեպի կյանքի վերջալույս ու ապրելու հույսի հետ պարզապես մաքառում էր:

Մենք սրտի ցավով կորցրինք նրան...

Անժելիկա Մավրիկի Բաբայան: Նա անհատականություն էր... Այստեղ նկարագրությունն սկսում է դողալ հիշողություններով ինքնախաբվելու համար, ու խորաթափանց ժպիտը դառնում է ցավի շինծու դիմախաղ: Հաշտվելը հեշտ չէ, երբ ամենուր իրերի վրա պատկերն է արձագանքվում, և ձայնը նույնքան քնքուշ ելևէջվում է յուրաքանչյուրիս ունկերում:

Անժելիկա Բաբայանը ծնվել է 1969թ. հոկտեմբերի 31-ին, Բաքվում: 1987թ. ընդունվել է Ադրբեջանի նավթի և քիմիայի համալսարանը, այնուհետև 1989թ. տեղափոխվել ՀՀ երկրաբանական ինստիտուտ և ավարտել այն ինժեներ-երկրաբանի որակավորումով:

1993-ին աշխատել է Ճարտարի միջնակարգ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի մասնագետ: 1999թ. ընդունվել է ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի բաժինը ու ավարտել այն: Մեծ է Անժելիկա Բաբայանի մասնագիտական դերն ու արժեքը, և դրա ցայտուն օրինակը տեսել ենք նրա սաների ունեցած հաջողություններում ու դպրոցի ինքնահաստատման գործում: Այստեղ ափսոսանքը կսկիծով է մրմնջում իսկական մանկավարժի, լավ ընկերոջ մասին խոսելիս: Նա պատկառելի կին էր, մայր, հիանալի ընկեր ու հարս: Հրաշալի զավակներ է թողել, որոնք, վստահ ենք, արժանի հետնորդներ կլինեն նրա համար և պիտանի զավակներ՝ ազգի համար:

Թող մարդ-մանկավարժի նրա որակին հետևորդ լինեն բոլոր նրանք, ովքեր առողջ սերունդ են դաստիարակելու և նվիրելու Արցախ-Հայաստանին:

Այսօր ժամանակ է պետք՝ հաշտվելու այն մտքի հետ, որ նա այլևս մեզ հետ չէ: Բայց ռուսաց լեզվի կաբինետից մեզ և աշակերտներին հավերժ հորդորելու է նրա պատկառելի դեմքը և անվարանելի խորհուրդը: Թող ամենազոր Տերը զորավիգ լինի քո հոգու հավերժական անդորրին և բոլո՜ր հարազատներին համբերություն ու սփոփանք պարգևի:

Ղուզե Ճարտարի Արա Ավանեսյանի անվան հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀՈՒՇԵՐԻ ԹԵՎՈՎ

Արցախյան շարժման հոբելյանական այս օրերին հոգուս պարտքն եմ համարում բոլորի հետ մեկ անգամ ևս հիշել հայկական Բաքվի կորուստը, այդ քաղաքում հայորեն ապրած և ստեղծագործած մարդկանց չխամրող հիշատակը: Արժանավոր հայ մտավորականներ էին հավաքվել «Գրական Ադրբեջան» ամսագրի, հեռուստատեսության և ռադիոյի հայկական հաղորդումների խմբագրության և հատկապես «Կոմունիստ» թերթի շուրջ, ուր ես աշխատել եմ տասնյակ տարիներ:

Գրչեղբայրական ջերմ ու անապական, տոնական պարզ ու բնական բարևներ ձեզ, ինձ պես արդեն ծերունացած, ճերմակներով սիրունացած, բառ ու բանով հարստացած, իմաստնացած գործընկերներ... Սրտի դաղով, դողով ու կարոտներով եմ մտաբերում այն օրերի ազգանվեր մեր ընկերներին՝ հանգուցյալ Գեղամ Անտելեպյանին, Համո Ամիրխանյանին, Անդրանիկ Սարուխանյանին, Թաթուլ Հուրյանին, Խորեն Բոջիկյանին, Անդրանիկ Պետրոսյանին, Միքայել և Կարո Առաքելյաններին, Հարություն Սաղումյանին, Թամարա Խանլարյանին, Ղուկաս Մկրտչյանին, Հարություն Մկրտչյանին, Հայկ Այվազյանին, թարգմանչաց ուսուցիչ Վաչե Ծատրյանին, Ռուբեն Բաղմանյանին, Գուրգեն Խաչատրյանին, Վաչե Աթայանին, Ալբերտ Գրիգորյանին, Գրիշա Ղազարյանին, Հասմիկ Մկրտումյանին, Արամ Մարգարյանին, Նորա Բաղդասարյանին, Արտո Գալստյանին, Գուրգեն Անտոնյանին, Աբրահամ Բախշունուն, Հրանտ Բաբայանին, Բագրատ Մկրտումյանին... Թող Ամենափրկիչը լուսավորի նրանց սուրբ հոգիները և երկար կյանք ու կորով տա նրանց սերունդներին... Եվ իհարկե, ողջերին՝ Մաքսիմ Հովհաննիսյանին, Արմեն Հովհաննիսյանին, Սոկրատ Խանյանին, Վարդան Հակոբյանին, Լևոն Ադյանին, Սերժ Առաքելյանին, Կոմիտաս Դանիելյանին... բոլորին, ու թող Աստված պահապան լինի նրանց շառավիղներին:

Հիմա մենք ուրախությամբ ու հպարտությամբ կարող ենք հավաստել, որ հույժ կարևոր, ազգօգուտ ու առինքնող էր մեր բոլորիս վաստակը Անդրկովկասի առաջին հայատառ այդ լուրջ լրագրի երկարամյա լույսընծայման, հայ մշակույթի, պատմության, լեզվի ու հավատի պահպանման, զարգացման ու մասսայականացման գործում:

Ուզում եմ գոնե մի քանի րոպե ընթերցողը հիշի այս պայծառ մարդկանց անունն ու գործը, որ գողտրիկ լապտերի պես ցրտաշունչ հողմերին և փոթորիկներին դիմանալով, վառ էին պահում հայ ինքնության լույսն աստիճանաբար հայաթափվող Բաքվում և Ադրբեջան կոչվածի այլ պատմական հայկական բնակավայրերում: Մաքրամաքուր ու լուսարար էր նրանց անունն ու խիղճը, և ցողակաթ արցունքով եմ հիշում նրանց շնորհալի դեմքերը:

Ես՝ ութսուներեքամյա ծերունի այրս, փախստականի բոլոր դառնությունները ճաշակած, յոթ անգամ վիրահատված և մեծ պապ դարձած, դեռ լի եմ թռիչքով ու երազանքով, շունչ ու կորովով, հանրօգուտ ու հետաքրքիր ապրելու տենչով ու ներշնչանքով: Ինքս Գորիսի Քարահունջից եմ և ստեղծագործական-նամակագրական կապեր ունեմ «Գրական Սյունիք» թերթի հետ: Վերջերս հրատարակած իմ հոդվածների, ակնարկների և գրախոսությունների ժողովածուն կոչել եմ Պուշկինի քնարական տողով՝ «Թող հար հնչի քնարիս լարը»:

Ուզում եմ, որ իմ օրինակով նորից հայ մարդը համոզվի, որ մեր ժողովուրդն ամենակարող է և անմահ, բոլոր դժվարությունները հաղթահարելի են, Հայոց աշխարհն անպարտելի է և հավերժող:

Մարկուն ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՌԴ ժուռնալիստների միության անդամ
ք. Կրասնոդար

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 12.10.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: